საპარლამენტო სისტემების განვითარების, რეფორმებისა და სწავლების
ცენტრი

MDF
მედიის განვითარების ფონდი
MEDIA DEVELOPMENT FOUNDATION

Ընտրություններից մինչև ինստիտուտներ

Ժողովրդավարության ուղեցույց երիտասարդների համար

Հեղինակներ.
Մարիամ Լորթքիփանիձե, Աննա Ճաիա

Խմբագիր.
Թամար Կինծուրաշվիլի

Թարգմանությունը՝
Սուսաննա Խաչատրյանի

© 2015, Մեդիայի զարգացման հիմնադրամ

© 2015, Designed by IBDesign

Առաջաբան

Քաղաքական գործընթացին քաղաքացիների ակտիվ մասնակցության համար, ինչը ժողովրդավարության գլխավոր ցուցիչներից մեկն է, հարկավոր է ըմբռնել այն, որ ժողովրդավարությունը միանվագ ակտ չէ և այն ընտրությունների օրը չի սկսվում և ավարտվում: Քաղաքացիական պատասխանատվությունը ենթադրում է մասնակցություն որոշում ընդունելու գործընթացին, իշխանության մշտական վերահսկողություն և ընդհանուր առմամբ ժողովրդի կառավարման լիարժեք իրականացում: Ժողովրդավարությունը ճիշտ այն ժամանակ է ուժեղ, երբ գործընթացին ընդգրկված են բոլորը, առանց նրանց տարիքի, գենդերային կամ ազգային պատկանելության խտրականության:

Սույն ուղեցույցը պատրաստվել է երիտասարդների համար և նպատակը ժողովրդավարության հայեցակարգի, ընտրական իրավունքի, իշխանության պատասխանատվության մասին նրանց ավելի լավ իրազեկելն է, ինչպես նաև ըմբռնել այն նշանակությունը, որը բերում է ընտրությունների կամ որոշումների ընդունման գործընթացին յուրաքանչյուր քաղաքացու մասնակցությունը:

Հույս ենք հայտնում, որ սույն ուղեցույցը, որը պատրաստեց մեդիայի զարգացման հիմնադրամը՝ MDF ընտրական համակարգերի զարգացման, բարեփոխումների և ուսուցման կենտրոնի աջակցությամբ, կնպաստի երիտասարդության շրջանում քաղաքական և ժողովրդավարական գիտակցության բարձրացմանը:

Բովանդակություն

Մաս I. Ժողովրդավարական կառավարում 7

Ուղղակի և ներկայացուցչական ժողովրդավարություն 7

Իշխանության բաշխում 8

Ընտրական համակարգեր 10

Ընտրություններ և ձայն տալ 10

Քաղաքական կուսակցություններ 11

Ազատ և արդարացի ընտրությունների 12

միջգերատեսչական հանձնաժողով 12

Ժողովրդավարություն և մեդիա: 4 էական նախապայման 13

Քարոզարշավ 17

Մաս II Ընտրությունների կազմակերպում 19

Մաս III . Գործընթացին ընդգրկվածություն ընտրություններից հետո 40

Լրատվության ազատություն 40

Վարժություններ 46

1. Ի՞նչ է նշանակալից: 46
2. Պատասխանատվություն 48
3. Ընտրությունների փորձ 50
4. Անհատական գործնական պլանի ձևավորում 51
5. Հաղորդակցություն և իրականացում (իմպլիմենտացիա) 53

Մաս I

Ժողովրդավարական կառավարում

Ի՞նչ է ժողովրդավարությունը:

Ժողովրդավարություն –հունարեն բառ է և նշանակում է ժողովրդի կառավարում (հունարեն՝ κράτος «դեմոս»- ժողովուրդ, κράτος «կրատոս» — օրենք, ուժ): Պետական կառավարման այս ձևի օրոք ամբողջ իշխանությունը անմիջականորեն պատկանում է ժողովրդին կամ նրա ներկայացուցիչներին: Կառավարումը, որի իշխանության աղբյուրը ժողովուրդն է, իրականացվում է ուղղակի կամ անուղղակի ներկայացուցչական ճանապարհով, պարբերական ընտրությունների ուղիով:

Ինչո՞ւ պետք է մասնակցենք ժողովրդավարական գործընթացին:

- Ժողովրդավարությունը ենթադրում է որոշում ընդունելու գործընթացին բոլոր քաղաքացիների ընդգրկվածություն,
- Ժողովրդավարական համակարգում մարդիկ ունեն ընտրության և կարծիք արտահայտելու ազատություն,
- Ժողովրդավարությունում բոլորի համար հավասար իրավունքներ և պատասխանատվություններ են,
- Ժողովրդավարությունում կա դատական համակարգ, որը բոլորին հասանելի է,
- Ժողովրդավարությունում իշխանությունը ժողովրդի առջև հաշվետու է և պատասխանատու:

Ուղղակի և ներկայացուցչական ժողովրդավարություն

Ո՞վ է որոշումներ ընդունում մեր համայնքում, տարածաշրջանում և երկրում:

Վրաստանը ներկայացուցչական ժողովրդավարության երկիր է, ինչը նշանակում է այն, որ բոլոր քաղաքացիներն ունեն իրենց կարծիքն արտահայտելու և որոշումներ ընդունելու իրավունք:

Պետությունը կառավարվում է քաղաքացիների կողմից ընտրված մարդկանց խմբի միջոցով, որը ընտրողների ներկայացուցիչն է և ստեղծում է կառավարություն:

Ժողովրդական ինքնիշխանության սկզբունքը ենթադրում է, որ պետական իշխանության աղբյուրը ժողովուրդն է: Ժողովուրդն իր իշխանությունը իրականացնում

է ներկայացուցչական կամ ուղղակի ձևով: Ժողովրդի մասնակցության ձևի համաձայն, առանձնացվում է ուղղակի և ներկայացուցչական ժողովրդավարությունը:

Ներկայացուցչական ժողովրդավարության համակարգը հիմված է սկզբունքների կամ տարիների ընթացքում ձևավորված կարևոր գաղափարների և արժեքների վրա: Ընտրված ներկայացուցիչները օրենսդրության միջոցով կառավարում են երկիրը: Իշխանությունը հաշվետու է ժողովրդի առջև, ինչը նշանակում է այն, որ իրենք պատասխանատու են նրանց առջև, ովքեր իրենց ընտրել են:

Ներկայացուցչական ժողովրդավարությունը տարբերվում է ուղղակի ժողովրդավարությունից: Ուղղակի ժողովրդավարությունում քաղաքացիները որոշումներ ընդունում են առանց ներկայացուցիչների, ուղղակի կերպով: Այսպիսի մոդել կարելի է իրականացնել միայն ծայրահեղ փոքր պետական ձևավորումներում: Համապատասխանաբար, ոչ մի ժամանակակից ժողովրդավարական համակարգ ամբողջությամբ չի հիմվում ուղղակի ժողովրդավարության սկզբունքների վրա, թերևս որոշակիորեն պարունակում է նրա առանձին տարրերը: Ուղղակի ժողովրդավարության ինստիտուտների օրինակներ են հանրաքվեն, համաժողովրդական հարցումը (պլեբիսցիտը), ժողովրդական օրենսդրական նախաձեռնությունը և այլն:

Հանրաքվե – Համաժողովրդական հարցումը անց է կացվում առանձնահատուկ նշանակության պետական հարցը վերջնականապես վճռելու, իսկ պլեբիսցիտը՝ ընտրողների կարծիքը հասկանալու համար: Հանրաքվեի արդյունքներն ունեն օրենքի ուժ, իսկ պլեբիսցիտի արդյունքները հանձնարարական բնույթի են:

Ներկայացուցչական ժողովրդավարությունը կամ, այլ կերպ եթե ասենք, ներկայացուցչական կառավարումը իրականացվում է պետական մարմինների միջոցով, որոնց ընտրությունը կատարվում է ժողովրդի կողմից: Հասարակության շրջանում ժողովրդավարական գործընթացը իրականացվում է հատուկ պետական մարմինների և հասարակական ինքնակառավարման միջոցով:

Իշխանության բաշխում

Իշխանության բաշխման սկզբունքը ենթադրում է պետական իշխանության բաժանում երեք միմյանցից անկախ ճյուղերի. օրենսդիր, գործադիր և դատական իշխանություններ:

Օրենսդիր իշխանությունը սահմանում է պետական և հասարակական կյանքի իրավական հիմունքները, երկրի ներքին և արտաքին քաղաքականության հիմական ուղղությունները: Օրենսդիր մարմնի կողմից ընդունված օրենքներն ունեն բարձրագույն իրավաբանական ուժ, օրենքներում արտահայտված իրավական նորմերը ունեն ընդհանուր և պարտադիր բնույթ:

Գործադիր իշխանությունն իր մարմինների միջոցով օրենսդիրների կողմից ընդունված իրավական նորմերը գործադրում է կյանքում: Նրա գործունեությունը պետք է հիմվի օրենքի վրա:

Դատական իշխանության գործառույթն է, ցանկացած խախտումից մարդու իրավունքների պաշտպանություն: Արդարադատություն իրականացվում է միայն դատական մարմինների կողմից:

Վրաստանում օրենսդիր իշխանություն իրականացնում է խորհրդարանը, գործադիր իշխանություն՝ կառավարությունը, դատական իշխանություն՝ Սահմանադրական դատարանը և ընդհանուր դատարանները:

Վրաստանի նախագահին հատկացված է Սահմանադրության, մարդու և քաղաքացիների իրավունքների և ազատությունների երաշխավորի դեր: Նախագահը պետական իշխանության մարմինների կողմից կատարում է արբիտրի գործառույթ:

Վրաստանի նախագահը Վրաստանի պետության հրամանատարն է և Զինված ուժերի Գերագույն Գլխավոր հրամանատարը: Նա վարում և իրականացնում է պետության ներքին և արտաքին քաղաքականությունը, ապահովում է երկրի միասնությունը, պետական մարմինների գործունեությունը Սահմանադրության համապատասխան: Նախագահը արտաքին փոխհարաբերություններում երկրի բարձրագույն ներկայացուցիչն է:

Վրաստանի նախագահն ընտրվում է համընդհանուր, հավասար և ուղղակի ընտրության իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ, 5 տարվա ժամկետով: Միևնույն անձը որպես նախագահ կարող է ընտրվել միայն երկու անգամ: Նախագահ կարող է ընտրվել ընտրական իրավունք ունեցող Վրաստանի քաղաքացին 35 տարեկանից, ով ապրել է Վրաստանում 5 տարի և մինչև ընտրությունների օրվա նշանակումը վերջին 3 տարվա ընթացքում ապրում է երկրում:

Վրաստանի խորհրդարանը երկրի Գերագույն ներկայացուցչական մարմին է, որը իրականացնում է օրենսդրական իշխանություն, վերահսկում է կառավարության գործունեությունը: Խորհրդարանը կազմված է համընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա գաղտնի քվեարկությամբ, չորս տարվա ժամկետով ընտրված 150 անդամից:

Խորհրդարանի անդամ կարող է ընտրվել Վրաստանի քաղաքացին 25 տարեկան տարիքից: Խորհրդարանն իր լիազորության ժամկետով ընտրում է նախագահ և նախագահի տեղակալներ: Խորհրդարանը կազմված է կոմիտեներից, իսկ նրա աշխատանքի կազմակերպման համար ստեղծվում է խորհրդարանի բյուրո:

Վրաստանի կառավարությունն ապահովում է գործադիր իշխանության, երկրի ներքին և արտաքին քաղաքականության իրականացումը: Կառավարությունն իր գործունեությունն իրականացնում է նախարարությունների և նրանց կառավարման

ոլորտիմեջմտնողպետականհիմարկություններիմիջոցով:Այնիրլիազորություններն իրականացնելիս՝ ղեկավարվում է կառավարական ծրագրով, որին վստահություն է հայտարարում խորհրդարանը: Կառավարությունը բաղկացած է վարչապետից և նախարարներից:

Դատական իշխանությունն իրականացվում է Սահմանադրական վերահսկողության և արդարադատության միջոցով: Սահմանադրական վերահսկողության դատական մարմին է Վրաստանի Սահմանադրական դատարանը: Արդարադատություն են իրականացնում ընդհանուր դատարանները:

Սահմանադրական դատարանը կազմված է 9 դատավորից: Սահմանադրական դատարանը այլ գործառույթների հետ միասին, քաղաքացու հայցի հիման վրա քննարկում է մարդու իրավունքների նկատմամբ նորմերի սահմանադրականության հարցը: Սահմանադրական դատարանը կարող է ոչսահմանադրական հայտարարել այս կամ այն նորմը:

Ի՞նչ ազդեցություն ունեն իշխանության գործողությունները մեր կյանքի վրա:

Իշխանության բոլոր մակարդակներով կատարվում է կարևոր որոշումների ընդունում, որոնք ազդեցություն են գործում ձեր կյանքի բոլոր ոլորտների վրա: Նման որոշ որոշում ազդեցություն է գործում այնպիսի ոլորտների վրա, ինչպիսիք են.

- Ձեր դպրոցը կամ համալսարանը,
- Շրջակա միջավայրը՝ որքանով մաքուր է օդը, ջուրը կամ ինչպես են կարգավորվում գլոբալ տաքացման հիմախնդիրները,
- Ձեր առողջությունը, այդ թվում առողջության ապահովագրության մատչելիությունը կամ բժշկի սպասարկման և դեղերի արժեքը,
- Ձեր անվտանգությունը, այդ թվում ոստիկանության և հրշեջ բաժանմունքների թվաքանակը,
- Որքան փող կծախսի պետությունը ռազմական ոլորտի կամ խաղաղարար առաքելությունների վրա,
- և այլն:

Ընտրական համակարգեր

Աշխարհում տարբերակում են մի քանի տեսակ ընտրական համակարգեր: Դրանց շրջանում ամենատարածվածը մեծամասնական, համամասնական և խառը ընտրական համակարգերն են:

Մեծամասնական ընտրական համակարգում երկիրը բաժանվում է մոտավորապես հավասար չափի ընտրական մարզերի: Ընտրողները կարող են ձայն տալ

քվեաթերթիկում թվարկված միայն մեկ թեկնածուին: Ընտրված է համարվում այն թեկնածուն, ով բոլորից շատ ձայն կստանա:

Համամասնական ընտրական համակարգի դեպքում կուսակցությունները կազմում են թեկնածուների ընդհանուր ցուցակներ: Յուրաքանչյուր ընտրող իր մեկ ձայնը տալիս է իրեն ընդունելի կուսակցության օգտին: Կուսակցությունը, որն օրենսդրությամբ սահմանված տոկոսային պատնեշը կհաղթահարի, ստացած ձայների ընդհանուր թվաքանակին ուղիղ համամասնորեն ընտրական մարմնում ստանում է համապատասխան քանակով տեղեր:

Խառը համակարգը միավորում է մեծամասնական և համամասնական համակարգերը: Ընտրական մարմինը կազմավորվում է մի մասը համամասնական, իսկ մի մասը մեծամասնական կարգով:

Վրաստանի նախագահը ընտրվում է մեծամասնական ընտրական համակարգով, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների և խորհրդարանի ընտրությունները իրականացվում են մեծամասնական և համամասնական խառը ընտրական համակարգերի կիրառմամբ:

Ընտրություններ և ձայն տալ

Ընտրությունները ժողովրդավարական կառավարման կենտրոնական մեխանիզմ է, որի միջոցով բնակչությունն ընտրում է իշխանության ներկայացուցիչներին, իսկ նրանք բնակչության առջև դառնում են հաշվետու:

Ընտրությունները հաճախ նկարագրված են որպես ամենակարևոր գործողություն, որին քաղաքացին կարող է դիմել քաղաքական գործընթացին մասնակցության համար: Ժողովրդավարական հասարակությունում բոլոր իրավասու ընտրող ունի ձայն տալու իրավունք, թերևս նրանցից ոմանք նախընտրում են չօգտվել այդ իրավունքից:

Ժողովրդավարությունն առանց ազատ և արդարացի ընտրությունների չի կարող գոյություն ունենալ:Ազատ և արդարացի անցկացված ընտրությունները ենթադրում են բոլորի հավասարություն, քանզի յուրաքանչյուր քաղաքացի ունի միայն մեկ ձայն: Այդ պատճառով էլ ձայն տալը ամեն մի քաղաքացու տալիս է իր ասելիքն արտահայտելու անհատական շանս՝ հնարավորություն:

Ընտրությունների վերջնական արդյունքը հանձնարարականն է քաղաքագետներին, քաղաքական կուսակցություններին և հասարակությանը, թե ինչ դիրքորոշումներ և տեսակետներ են աջակցություն ստանում հասարակության մեծամասնության կողմից:

Քաղաքական կուսակցություններ

Քաղաքացիների այնպիսի միավորումը, որը հասարակության և պետական կառուցվածքի մասին միասնական մոտեցում ունի և գրանցված է «Քաղաքացիների քաղաքական կազմակերպության մասին» Վրաստանի օրգանական օրենքին համապատասխան, կոչվում է քաղաքական կուսակցություն: Քաղաքական կուսակցության նպատակն է իշխանություն գալ, երկրի կառավարությունում և խորհրդարանում տեղեր ձեռք բերել, որպեսզի այն քաղաքացիների խմբերի շահերին համապատասխան քաղաքականություն վարի, որոնց նա ներկայացնում է:

Ժողովրդավարական հասարակության բնութագրական նշաններից մեկը երկրում երկու կամ ավելի քաղաքական կուսակցության գոյությունն է: Այս դեպքում յուրաքանչյուր քաղաքացու տրվում է հնարավորություն՝ ծանոթանալու տարբեր կուսակցության ծրագրին և ընտրություն կատարելու այն կուսակցության օգտին, որի ծրագիրը, նրա կարծիքով, ապահովում է երկրի զարգացումը:

Քաղաքական կուսակցության ծրագիրը պարունակում է կուսակցության տեսակետը և գոյություն ունեցող հիմնախնդիրների լուծման ուղիները: Վրաստանում ընտրական քարոզարշավի ժամանակ, որը ընթանում է 40 օրվա ընթացքում, յուրաքանչյուր քաղաքացու տրվում է հնարավորություն մեդիայի և ընտրական քարոզչական նյութերի միջոցով ծանոթանալու ընտրություններին մասնակցող քաղաքական կուսակցությունների նախընտրական ծրագրերին և միայն դրանից հետո կատարելու տեղեկացված ընտրություն:

Ընտրությունների տեղեկացվածության նպատակով, կուսակցությունները իրականացնում են նախընտրական քարոզչություն և այդ նպատակով անց են կացնում նախընտրական հանդիպումներ, հրապարակային բանավեճեր և քննարկումներ, ցույցեր:

Ընդդիմադիր կուսակցության գործառույթն է իշխանության գործունեության վերլուծությունը և քննադատությունը, կառավարող կուսակցությանը և հասարակությանը այլընտրական գաղափարներ առաջարկելը:

Միջգերատեսչական հանձնաժողով ազատ և արդարացի ընտրությունների համար

Ընտրությունները թափանցիկ և արդարացի մթնոլորտում անցկացնելու նպատակով, ընտրական օրենսգրքի հիման վրա, Արդարադատության նախարարությանը կից ստեղծվում է ազատ արդարացի ընտրությունների համար միջգերատեսչական հանձնաժողով: Հանձնաժողովը աջակցություն է ցուցաբերում տարբեր կառավարական հաստատությունների համակարգմանը և կառավարությանը և ընտրություններին ընդգրկված բոլոր շահագրգիռ կողմի միջև վարում է երկխոսություն: Հանձնաժողովը

համագործակցում է քաղաքական կուսակցությունների, տեղական ոչկառավարական և միջազգայինկազմակերպությունների,դիտորդներիհետ:Նալիազորվածէուսումնասիրելու ընտրական գործընթացի մասին շահագրգիռ կողմերի մատուցած տեղեկատվությունը, ինչպես նաև լրատվամիջոցներով տարածված տեղեկությունները ընտրական խախտումների մասին և հարկ եղած դեպքում հանրային ծառայողների և վարչական մարմինների նկատմամբ մշակելու առաջարկություններ և հանձնարարականներ բացահայտված փաստերին արձագանքելու համար:

Ժողովրդավարություն և մեդիա

4 էական նախապայման

Այն բանի համար, որպեսզի ընտրությունները համարվեն ժողովրդավարական և արտացոլվի ժողովրդի կամքը, դրանք պետք է բավարարեն որոշակի պայմաններ: Դրանցից չորսը ամենաէականն է.

1. Ընտրողը պետք է կարողանա իրատեսական ընտրություն կատարել քաղաքական կուսակցությունների և թեկնածուների միջև: Այն ժամանակ, երբ գործընթացին մասնակցում է միայն մեկ դոմինանտ՝ գերիշխող կուսակցություն, չեն անցկացվում բանավեճեր և չի կատարվում տարբերվող գաղափարների փոխանակում, բացառված է նաև մրցույթը տարբեր սուբյեկտների միջև: Նման դեպքում ընտրված կուսակցությունը չունի հիմք ժողովրդին ունկնդրելու, քանզի ժողովուրդը այլ ընտրություն չունի:
2. Ընտրություններին մասնակցող սուբյեկտների համար պետք է ապահովված լինի քարոզարշավը ազատ վարելու հնարավորություն, ինչը նշանակում է այն, որ նրանք պետք է ազատ կարողանան վարել ընտրական հանդիպումներ և հաղորդակցվել ընտրողի հետ: Եթե կուսակցություններին և թեկնածուներին չի տրվում զրուցելու հնարավորություն, ոչ էլ նոր գաղափարները և մոտեցումները կդառնան ընտրողին հասանելի:
3. Պետք է գոյություն ունենան կանոններ, որոնք կսահմանեն ընտրությունների անցկացումը: Այս կանոնները պետք է լինեն հայտնի, մատչելի և ընդունելի բոլոր մասնակցի համար: Կազմակերպությունը, որը կարգավորում է այս կանոնները, պետք է օգտվի վստահությամբ: Դատարանը պետք է ապահովի այս կանոնները խախտելու դեպքում պատժի գործադրումը: Պետք է գոյություն ունենան խիստ օրենսդրական երաշխիքներ, ինչը գործընթացը կպաշտպանի կաշառակերությունից և ընտրողների վրա ճնշում գործադրելուց: Առանց այս երաշխիքների, ընտրությունների արդյունքները կարող են անարդարացի համարվել և ժողովուրդն արտահայտի դժգոհություն: Եթե ժողովուրդը տեսնում է, որ ընտրությունները արդարացի են, գործընթացը թափանցիկ է ընթանում, ընտրված իշխանության նկատմամբ վստահությունը ավելի է:
4. Ամենակարևորն է ժողովուրդը գիտենա, ում տվեց ձայն, ինչպես տվեց ձայն և ինչու է ձայն տալը էական: Ընտրողը պետք է կարողանա տեղեկացված ընտրություն կատարել, դրա համար նա անկողմնակալ և հավասարակշռված լրատվություն պետք է ստանա:

Այս 4 պայմանը բավարարելու դեպքում կարելի է ասել, որ ընտրված իշխանությունը օրինական է: Դա նշանակում է, որ հաղթանակած կուսակցության կողմից երկրի կառավարումը և որոշումների ընդունումը ժողովրդի համար ընդունելի է և որ ընտրությունները ճանաչում և ընդունում է նաև միջազգային համագործակցությունը:

Ժողովրդավարություն առանց ազատ մամուլի գոյություն չունի

Ժողովրդավարական ընտրությունների այս 4 նախապայմանին հասնել առանց ազատ մամուլի անհնար է:

Մեդիան ամենանշանակալից ինստիտուտն է, որը ժողովրդին ընտրությունների և քաղաքական ընտրության մասին լրատվություն է մատուցում: Մեդիան պետք է լինի ազատ այն բանի համար, որպեսզի արդարացիորեն լուսաբանի բոլոր քաղաքական կուսակցության քարոզարշավը, հասարակությանը մատուցի լրատվություն ընտրությունների և ընթացակարգերի խախտումների մասին, ինչպես նաև առաջադրի հարցեր գործընթացի թափանցիկության կապակցությամբ:

Մեդիան պետք է ապահովի ինչպես իշխանության, այնպես էլ ընդդիմադիր կուսակցությունների հաշվետու լինելը հասարակության առջև, հիշեցնի ընտրողին տված նախընտրական խոստումների կատարումը:

Ի՞նչ պարտականություններ է դնում օրենսդրությունը հեռարձակման վրա ընտրողների իրազեկման նպատակով:

Հանրայինհեռարձակումը,հանրայինհեռարձակմանԱջարիայիհեռուստատեսությունը և ռադիոն, ինչպես նաև համայնքային հեռարձակումը պարտավոր են, իրենց սպասարկման գոտում ընթացող ընտրական քարոզարշավի ժամանակ, իրենց եթերում յուրաքանչյուր ժամը մեկ 60 վայրկյանից ոչ ավելի անվճար և առանց խտրականության տեղադրել մեկական որակյալ ընտրական սուբյեկտի կողմից ներկայացված նախընտրական գովազդ:

Ընտրական սուբյեկտներին անվճար գովազդային ժամանակ հատկացնելու պարտավորությունը տարածվում է նաև ընդհանուր հաղորդում իրականացնող ազգային հեռարձակումների վրա: Նրանք պարտավոր են ընդհանուր ընտրությունների, ընտրական քարոզարշավի ժամանակ իրենց եթերում յուրաքանչյուր 3 ժամը մեկ առնվազն 90 վայրկյանով անվճար և առանց խտրականության տեղադրել մեկական որակյալ ընտրական սուբյեկտի կողմից ներկայացված նախընտրական գովազդ:

Ինչ վերաբերում է այլ հեռարձակումներին, նրանց վրա ընտրական սուբյեկտների անվճար նախընտրական գովազդը նախընտրական ժամանակաշրջանում (մինչև ընտրությունների օրը վերջին 30 օրվա ընթացքում) տեղադրելու պարտավորությունը տարածվում է այն դեպքում, եթե նրանք իրենց եթերում կտեղադրեն վճարովի

նախընտրական գովազդ: Անվճար գովազդային ժամանակի առանց խտրականության տեղադրումը ենթադրում է վճարովի նախընտրական գովազդի գումարային ժամանակից ամենապակաս 3-անգամ ավելի ժամանակ անվճար հատկացնելու պարտավորություն:

Չի կարելի սուբյեկտի կողմից չկիրառված ժամանակը հետագայում կիրառել:
Որակյալ ընտրական սուբյեկտը պետք է բավարարի հետևյալ պահանջները.

- Անկախորեն մասնակցել է վերջին խորհրդարանային ընտրություններին և ստացել է ընտրողների ձայների առնվազն 4 տոկոսը,
- Անկախորեն մասնակցել է վերջին տեղական ինքնակառավարման համամասնական կարգով անցկացված ընտրություններին և ստացել է ընտրողների ձայների առնվազն 3 տոկոսը երկրի մասշտաբով,
- Միավորված էր ընտրական դաշինքում, որը վերջին խորհրդարանական ընտրություններում ստացավ ընտրողների ձայների առնվազն 4 տոկոսը, և հանդիսանում էր այս դաշինքի թիվ մեկը,
- Միավորված էր ընտրական դաշինքում, որը վերջին տեղական ինքնակառավարման համամասնական կարգով անցկացված ընտրություններում ստացավ ընտրողների ձայների առնվազն 3 տոկոսը երկրի մասշտաբով, և հանդիսանում էր այս դաշինքի թիվ մեկը:

Հեռարձակողը իրավասու է որպես որակյալ ընտրական սուբյեկտ ճանաչել քաղաքական կուսակցությունը, որը ընտրությունների տարում Վրաստանի ողջ տարածքում ընտրական օրենսդրությամբ սահմանված պայմաններին համապատասխան անցկացված առնվազն 5 հարցման կամ մինչև ընտրությունները 1 ամսվա ընթացքում անցկացված հետազոտությունների արդյունքներին համապատասխան, օգտվում է ընտրողների առնվազն 4 տոկոսի աջակցությամբ: Անթույլատրելի է հեռարձակման կողմից սոցիոլոգիական հետազոտության արդյունքները կիրառել խտրականությամբ:

Ինչպե՞ս է Օրենսդրությունը պաշտպանում ընտրողին հասարակական կարծիքի շահարկումից:

Ընտրությունների նշանակման օրից սկսած մինչև ԿԸՀ-ի կողմից ընտրությունների վերջնական արդյունքների հրապարակումը և այդ օրվանից 1 ամսվա ընթացքում ընտրությունների կապակցությամբ հասարակական կարծիքի հարցման արդյունքները հրապարակելիս օրենսդրությունը հաստատում է հատուկ կանոնակարգեր: Այս կանոնակարգերի նպատակն է բացառել ընտրությունների ժամանակաշրջանում լրատվամիջոցների կողմից հասարակական կարծիքի շահարկումը և հասարակությանը մատուցել լիարժեք լրատվություն:

Ընտրական Օրենսդրության համաձայն, հասարակական կարծիքի հետազոտությունը պետք է բավարարի հետևյալ պահանջները.

- Պետք է հիմնվի ներկայացուցչական պատահական ընտրության ընդունված

գիտական մեթոդոլոգիայի վրա, որն ապահովում է արդյունքների ոչ պակաս 95-տոկոսանոց հուսալիություն և որի հավանականության շրջանակները 3 տոկոսը չեն գերազանցում,

- Պետք է հրապարակվի հասարակական կարծիքի հետազոտության մեթոդոլոգիայի հուսալիության և արդյունքների օբյեկտիվության վերստուգումից հետո,
- Նույն կամ այլ համեմատելի հասարակական կարծիքի հետազոտության արդյունքներում նշանակալի տարբերությունների կամ փոփոխությունների առկայության ժամանակ պետք է հնարավոր լինի այս տարբերությունների կամ փոփոխությունների հավաստի գիտական բացատրությունը,
- Չպետք է լինի հասարակական կարծիքի շահարկում կամ գումար կուտակելու հնարավորություն, չպետք է անցկացվի հեռախոսի, փոստի կամ/և համացանցի միջոցով,
- Պետք է հիմնվի թափանցիկ մեթոդոլոգիայի վրա, որը տալիս է արդյունքները անկախ վերստուգելու հնարավորություն,

Արդյունքները հրապարակելիս պետք է մատնացույց արվի.

- Կազմակերպությունը, որն անց է կացրել հասարակական կարծիքի հետազոտություն,
- Հասարակական կարծիքի հետազոտության պատվիրատուն կամ ֆինանսավորողը,
- Հետազոտությունում հրապարակված հարցերի ճիշտ ձևակերպումը և հաջորդականությունը,
- Դաշտային հետազոտության անցկացման ժամանակը,
- Հարցմանը մասնակցածների թվաքանակը և ընտրության մեթոդը,
- Ինչ տարածման տարածքում կամ ինչ կարգի մարդկանց շրջանում է անցկացվել ընտրությունը,
- Հենվու՞մ է, թե ոչ հետազոտությունը հարցման բոլոր մասնակցների կարծիքին,
- Այն մասնակիցների թվաքանակը, ովքեր հրաժարվեցին հետազոտությանը մասնակցելուց, հարցին չպատասխանեցին կամ որոնց չհաջողվեց հարցեր առաջադրել,
- Ընտրության չափը,
- Հավանականության շրջանակները,
- Տեղեկատվություն այլ ցանկացած գործոնի մասին, որը կարող է նշանակալից ազդեցություն գործել արդյունքների վրա:

Ինչպե՞ս է կատարվում հատուկ կարիք ունեցող անձանց իրազեկումը:

Լսողությունից զրկվածների համար Հանրային հեռարձակումը ընտրական քարոզարշավի ժամանակաշրջանում ընտրությունների կապակցությամբ եթերում թողարկած իր հաղորդումներում պարտավոր է ապահովել սուրդոթարգմանություն:[1]

[1] «Վրաստանի Ընտրական Օրենսգիրք« Հոդված 51

Նախընտրական քարոզչություն վարելու և քարոզչությանը մասնակցելու իրավունք չունեն.

- Ընտրական հանձնաժողովի անդամները, դատավորը, Վրաստանի ներքին գործերի և Պաշտպանության նախարարությունները, Դատախազությունը, Արտաքին հետախուզական և Պետական պաշտպանության հատուկ ծառայության հանրային պաշտոնյաները, օտար երկրի քաղաքացիները և կազմակերպությունները, բարեգործական և կրոնական կազմակերպությունները, պետական և տեղական կառավարման մարմինների հանրային պաշտոնյաները, երբ նրանք պաշտոնական և ծառայողական պարտականություններ են կատարում:

Ի՞նչ խորհուրդ կտայիք ապագա ընտրողներին ընտրություններին մասնակցության կապակցությամբ:

Քաղաքական կուսակցությունները և թեկնածուները ընտրական քարոզարշավի ժամանակ դիմում են տարբեր ռազմավարության, որպեսզի բնակչությանը ծանոթացնեն իրենց հայացքներին և հավաստիացնեն նրանց, որ կարող են լինել ժողովրդի ներկայացուցիչները: Ամեն մարդ կարող է ակտիվ մասնակցություն ունենալ ընտրական քարոզարշավին և հաշվի առնել հետևյալ ռազմավարությունը.

- Քարոզարշավի ժամանակ թեկնածուները հաճախ շրջում են դռնեդուռ, եթե նրանք ձեր դռանը մոտենան, համարձակորեն առաջադրեք հարցեր: Իրականում թեկնածուները, ովքեր պայքարում են հանրային իշխանություն գալու համար, անձամբ ուզում են, որ դուք նրանց հարցեր առաջադրեք: Հիշեցեք, որ նրանք պայքարում են ձեր ձայնի համար և շանսը, որ ձեզ ծանոթացնեն իրենց կուսակցության տեսլականին՝ նրանց շանսն է համոզելու ձեզ ընտրելու ճիշտ իրենց:
- Ընտրեք հարցեր, որոնք ամենից ավելի են մտահոգում ձեզ և պարզաբանեք ինչ է պլանավորում կուսակցությունը և թեկնածուն այդ ուղղությամբ:
- Եթե ձեզ չի տրվի շանս, որ անձամբ զրուցեք թեկնածուի հետ, զանգահարեք նրա ընտրական շտաբ:
- Եթե կուսակցությունը կամ թեկնածուն մեկ անգամ արդեն եղել է իշխանությունում, դուք կարող եք պարզաբանել, թե ինչպես էր նա անցյալում գլուխ հանում այս հիմսախնդիրներից:
- Կուսակցության ընտրական հարթակին, տեսլականին, սկզբունքներին ծանոթանալու ամենալավ ուղին մեկ ընտրատարածքում բնակչության հավաքվելն է և հարցերին պատասխանելն է: Դուք ունեք հնարավորություն տեղեկանալու, թե թեկնածուն ինչպես է մտադիր լուծել այն հիմսախնդիրները, որոնք մտահոգում են ձեզ և ձեր համայնքի ներկայացուցիչներին:
- Եթե դուք չեք մասնակցել նման հասարակական հավաքին, կարող եք հետևել թեկնածուներին տարբեր բանավեճերում ելույթ ունենալիս:
- Մեդիան թեկնածուների և կարևոր հարցերի մասին տեղեկատվություն ստանալու օգտակար աղբյուր է: Հեռուստատեսությունը, ռադիոն, լրագրերը և օնլայն

հրատարակությունները ապահովում են հասարակության իրազեկումը ընտրական հարցերի մասին, ամենաարդյունավետ ձևաչափը այն է, որտեղ անձամբ թեկնածուները զրուցում են կարևոր հարցերի շուրջ:

- Քաղաքական կուսակցությունները և թեկնածուները նաև դիմում են զովազդի տարբեր ձևերի՝ հեռուստատեսային, ռադիո, լրագրային զովազդներին, պոստերների, բուկլետների և այլն: Ուշադրություն դարձրեք այն հաղորդագրությունների վրա, որոնք թեկնածուները մատուցում են հասարակությանը զովազդների միջոցով:

Մաս II

Ընտրությունների կազմակերպում

Վրաստանում ո՞վ ունի ակտիվ ընտրական իրավունք:

Վրաստանի Ընտրական Օրենսգիրքը անձի՝ ընտրող լինելու իրավունքն անվանում է ակտիվ ընտրական իրավունք: Ակտիվ ընտրական իրավունքը Վրաստանի քաղաքացու իրավունքն է ձայն տալու միջոցով հանրային իշխանությանն ներկայացուցչական մարմնում ընտրելու ժողովրդի ներկայացուցիչներ, համընդհանուր ընտրություններին, ինչպես նաև հանրաքվեին և պլեբիսցիտին մասնակցության ճանապարհով արտահայտելու իր կարծիքը:[2]

Ակտիվ ընտրական իրավունք ունեն Վրաստանի բոլոր քաղաքացիները, ում մինչև ընտրությունների/հանրաքվեի/պլեբիսցիտի օրը լրացել է կամ այդ օրը լրանում է 18 տարեկան և ով բավարարում է ընտրական Օրենսգրքով սահմանված պայմանները, բացի այն անձանցից, ում Վրաստանի Սահմանադրությամբ կամ/և ընտրական Օրենսգրքով սահմանափակված է ընտրական իրավունքը:[3]

Պասսիվ ընտրական իրավունքը քաղաքացու իրավունքն է ընտրվելու ընտրական մարմնում և այդ իրավունքն ունեն Վրաստանի բոլոր քաղաքացիները, ովքեր իրավասու են մասնակցել ընտրություններին:

Օրենսդրությամբ ապահովված է ընտրողների կամքի ազատ դրսևորումը:

Ո՞վ է պատասխանատու ընտրական գործընթացի համար:

Վրաստանում ընտրական գործընթացը վարվում է Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովի կողմից, որը ապահովում է, որպեսզի ընտրությունները լինեն.

- Ազատ, բաց և անկողմնակալ,
- Ընտրողներն ունենան ընտրություններին մասնակցելու համար հարկավոր անհրաժեշտ տեղեկատվություն,
- Քաղաքական մասնակիցներն ունենան լրատվություն, որպեսզի պաշտպանեն ընտրական կանոնները:

---

[2] Վրաստանի ընտրական Օրենսգիրք, Հոդված 2, ենթակետ «ն»:
[3] Վրաստանի Ընտրական Օրենսգիրք, Հոդված 3, ենթակետ «աա»:

Ինչպե՞ս է կատարվում ընտրողների գրանցումը:

Ընտրողի ընտրական ձայնի իրացումը ուղղակիորեն կախված է ընտրողների գրանցումից և ընտրացուցակների կազմումից: Օրենքը միմյանցից տարբերակում է «պարտադիր» և «կամավոր» գրանցումը:

Պարտադիր գրանցման ժամանակ իշխանության մարմինները պարտավոր են բոլոր ընտրողներին որոշեն և նրանց մտցնեն Ընտրողների համընդհանուր ցուցակի մեջ: Պարտադիր գրանցումը կարող է լինել երկու տեսակ. Պարբերական գրանցում պետության նախաձեռնությամբ, որի ժամանակ ընտրական հանձնաժողովի աշխատակիցը շրջում է դռնեդուռ և ամեն ընտրությունից առաջ կամ մի քանի տարին մեկ անգամ հաշվառում է ընտրողին, և մշտական գրանցում՝ պետության ձեռքին գոյություն ունեցող ռեսուրսների հիման վրա, երբ ընտրողների ցուցակները կազմվում են պետության կողմից մշտապես նորացվող ցուցակների կամ քաղաքացիական ռեեստրի տվյալների հիման վրա: Ինչ վերաբերում է կամավոր գրանցմանը, այն ենթադրում է ընտրողների նախաձեռնությամբ գրանցում: Կամավոր գրանցումը կարող է լինել երկու տեսակ. առաջին՝ պարբերական գրանցում ընտրողի նախաձեռնությամբ (քաղաքացիները ամեն ընտրությունից առաջ կամ մի քանի տարին մեկ անգամ գնում են հատուկ գրանցման կենտրոններ և անցնում են գրանցում) և մշտական գրանցում ընտրողի նախաձեռնությամբ (ընտրողները գնում են հատուկ գրանցման կենտրոն, որը աշխատում է ողջ տարվա ընթացքում և անցնում են գրանցում):

Ո՞վ է պատասխանատու Ընտրական ցուցակների ձևավորման համար:

Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովը (ԿԸՀ) պատասխանատու է Ընտրողների միասնական ցուցակի ձևավորման, նրա համակարգչային մշակման և հանրային տեղեկատվության համար հատկացված մասը ԿԸՀ-ի կայք-էջում տեղադրելու մասին: Պատասխանատու հիմարկությունները տարեկան չորս անգամ՝ ամեն տարվա փետրվարի 1-ին, մայիսի 1-ին, հուլիսի 15-ին և նոյեմբերի 1-ին, ընտրական իրավունք ունեցող անձանց մասին, ինչպես նաև ընտրական իրավունք չունեցող անձանց մասին նորացված կամ նոր տվյալներ են փոխանցում ԿԸՀ-ին: Այս տվյալների հիման վրա ԿԸՀ-ն ապահովում է Ընտրողների միասնական ցուցակի տվյալների էլեկտրոնային բազայի նորացումը:[4]

Ընտրողների միասնական ցուցակը կազմելու համար տվյալներ մատակարարելու մասին միաժամանակ պատասխանատու է մի քանի հիմարկություն.

- Վրաստանի Արդարադատության նախարարությունը,
- Տեղական Ինքնակառավարման մարմինները,
- Վրաստանի բռնագրավված տարածքներից բռնի տեղաշարժված անձանց և տարհանվածների նախարարությունը,

[4] Վրաստանի Ընտրական Օրենսգիրք, Հոդված 31, Մաս 6, Ենթակետ «ա»:

- Վրաստանի Պաշտպանության նախարարությունը,
- Վրաստանի պատժա-կատարողական և պրոբացիայի նախարարությունը,
- Վրաստանի ներքին գործերի նախարարությունը,
- Հետախուզական ծառայությունը,
- Պետական պաշտպանության հատուկ ծառայությունը,
- Վրաստանի հյուպատոսական հիմնարկությունները,
- Վրաստանի Գերագույն Դատարանը:

Ընտրողների միասնական ցուցակում մտցվում են ընտրողի մասին հետևյալ տվյալները.

- Ազգանուն, անուն,
- Ծննդյան տարեթիվ (թիվ, ամիս, տարի),
- Հասցե (Վրաստանի քաղաքացու Ինքնության վկայականի կամ Պետական սերվիսների զարգացման գործակալության տվյալների բազայի համաձայն),
- Վրաստանի քաղաքացու անձնական թիվ,
- Փաստացի բնակության վայրի (Վրաստանի բռնագրավված տարածքից հարկադրաբար տեղաշարժված անձի համար նշվում է ժամանակավոր բնակության հասցեն, այլ պետությունում գտնվող անձի համար մատնանշվում է «Հյուպատոսական հաշվարկի վրա է գտնվում», իսկ եթե նման անձը Վրաստանի հյուպատոսական հաշվարկի վրա կանգնած չէ՝ «Գտնվում է արտասահմանում»),
- Ընտրողների միասնական ցուցակում գրանցման ամսաթիվը,
- Լուսանկար,
- Սեռը:[5]

Ընտրողների միասնական ցուցակում սեփական անձը վերստուգել ընտրողներն անձամբ կարող են ԿԸՀ-ի էլեկտրոնային տվյալների բազայում՝ հետևյալ հասցեով. http://voters.cec.gov.ge/

Անձնական թվից և սեռից բացի բոլոր տեղեկատվությունը բաց է:

Ինչո՞ւ պետք է գրանցվի ամեն մի ընտրող:

Ընտրողների գրանցումը կարևոր է, որպեսզի պահպանենք իրավասու ընտրողների ճիշտ և նորացվող ցուցակը: Ընտրողների ցուցակը կիրառվում է այն բանի վերահսկման համար, թե ով տվեց ձայն: Ցուցակը ապահովում է, որ յուրաքանչյուր ընտրող միայն մեկ անգամ օգտվի ձայն տալու իրավունքից և ի սկզբանե բացառվի ձայների կեղծումը:

[5] Վրաստանի Ընտրական Օրենսգիրք, Հոդված 31, Մաս 2:

Ո՞վ չունի Վրաստանի ընտրություններին, հանրաքվեին, պլեբիսցիտին ձայն տալու իրավունք:

Վրաստանի Սահմանադրության 28-րդ Հոդվածի երկրորդ մասի համաձայն, ընտրություններին և հանրաքվեին մասնակցելու իրավունք չունի քաղաքացին, ում դատարանը անգործունակ է ճանաչել կամ դատարանի վճռով գտնվում է Պատժա-կատարողական հիմարկությունում, բացի այն անձից, ով նվազ ծանր հանցանք է կատարել: Իսկ Ընտրական Օրենսգրքի 3-րդ Հոդվածի ա.գ. ենթակետը պարզաբանում է, որ ընտրություններին, հանրաքվեին և պլեբիսցիտին մասնակցելու իրավունք չունի Վրաստանի քաղաքացին, ով.

- Դատավճռի հիման վրա գտնվում է քրեա-կատարողական հիմարկում, բացի այն անձից, ով կատարել է նվազ ծանր հանցագործություն,
- Աջակցություն ստացողը, եթե նա «Հոգեբուժական օգնության մասին» Վրաստանի օրենքին համապատասխան տեղավորված է ստացիոնարային հոգեբուժական հիմարկությունում:

Ի՞նչ դեպքում կարելի է Ընտրողների ցուցակում փոփոխություն մտցնել:

Ընտրական գրանցում ունեցող կուսակցությունը, ընտրական դաշինքը, դիտորդական կազմակերպությունը և ընտրողը իրավունք ունեն ծանոթանալու ԿԸՀ-ում, Տարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովներում գոյություն ունեցող ընտրողների ցուցակների բաց տեղեկատվության համար հատկացված տարբերակին, անճշտություն հայտնաբերելու դեպքում, մինչև ընտրությունների օրը, 16-րդ օրից ոչ ուշ, իսկ ոչընտրական ժամանակաշրջանում՝ ցանկացած ժամանակ, պահանջել ընտրողների մասին տվյալները և ընտրողների ցուցակներում մտցնել փոփոխություններ: Տվյալներին ծանոթանալը և պատճեն տալը կատարվում է հանրային տեղեկատվությանը ծանոթանալու և տալու համար Վրաստանի Օրենսդրությամբ սահմանված կարգով:

Իր հերթին ընտրողն իրավունք ունի պահանջել միայն իր և իր ընտանիքի անդամների մասին գոյություն ունեցող բոլոր տվյալների հետ ծանոթացում և դրանցում փոփոխության մտցնում: [6]

Դիմումը քննարկում և համարժեք որոշում է ընդունում համապատասխան Ընտրատարածքային հանձնաժողովը 2 օրացույցային օրվա ժամկետում, իսկ ընտրությունների ժամանակաշրջանում՝ մինչև ընտրությունների օրը 14-րդ օրվանից ոչ ուշ: Ընտրատարածքային հանձնաժողովի կարգադրությունը ընտրողների տվյալներում/ընտրողների ցուցակում փոխություններ մտցնելու մասին 2 օրվա ժամկետում փոխանցվում է ԿԸՀ-ին և համապատասխան Տեղամասային ընտրական

[6] Վրաստանի Ընտրական Օրենսգիրք, Հոդված 31, Մաս 7:

հանձնաժողովին: Ընտրական հանձնաժողովները պատշաճ փոփոխությունը անհապաղ պետք է մտցնեն ընտրողների մասին տվյալներում/ընտրողների ցուցակներում:

Այն դեպքում, եթե դիմողին մերժվում է փոփոխություն մտցնելու մասին, մերժումը պետք է լինի հիմավորված: Մերժումը 2 օրվա ժամկետում կարելի է բողոքարկել համապատասխան շրջանային/քաղաքային դատարանում: Դատարանի կողմից հայցը բավարարելու դեպքում, դատարանի որոշումը 2 օրվա ժամկետում, սակայն մինչև ընտրությունների օրը 11-րդ օրից ոչ ուշ, պետք է փոխանցվի Ընտրատարածքային հանձնաժողովին, որը պատշաճ տեղեկատվությունը անհապաղ պետք է փոխանցի ԿԸՀ-ին և համապատասխան Տեղամասային ընտրական հանձնաժողովին: Ընտրական հանձնաժողովները պատշաճ փոփոխությունը անհապաղ պետք է մտցնեն Ընտրողների մասին տվյալներում/Ընտրողների ցուցակներում:[7]

Մինչև ընտրությունները 13-րդ օրից մինչև 10-րդ օրը փոփոխության մտցնում կատարվում է միայն Դատարանի որոշմամբ: Արգելված է ընտրացուցակներում փոփոխություն մտցնել մինչև ընտրությունները 10 օրվա ընթացքում, բացի այն դեպքերից, եթե ընտրողը մինչև ընտրությունները, 16-րդ օրից ոչ ուշ ընտրողների ցուցակում գրանցման նպատակով ընտրական հանձնաժողովին դիմել չի հասցրել այն պատճառով, որ գտնվում էր արտասահմանում, հիվանդանոցում կամ ազատազրկման հիմարկությունում: Դրա համար ընտրողը պետք է ներկայացնի դիմում և համապատասխան փաստաթղթեր՝ սահմանը հատելու մասին Անձնագրային գրառում, տեղեկանք ստացիոնարային բուժման կամ ազատազրկման հիմարկությունից: Գրանցման հարցը կարգադրությամբ վճռում է Ընտրատարածքային հանձնաժողովը՝ դիմումը ընդունելուց 2 օրվա ժամկետում, իսկ եթե մինչև քվեարկության օրը մնացել է 2 օրից պակաս, ապա՝ անհապաղ: Մերժման որոշում ընդունելու դեպքում, ընտրողին անհապաղ պետք է ծանոթացնել որոշման հետ: Եթե այդպիսի ընտրողը ընտրություններին մասնակցելու պահանջով ընտրական վարչությանը կդիմի քվեարկության օրը, նրան գրանցում է անցկացնում համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովը:[8]

Ո՞վ է մտնում ընտրողների հատուկ ցուցակի մեջ:

Մինչև քվեարկության օրը 3-րդ օրից ոչ ուշ, Ընտրատարածքային հանձնաժողովը որոշում և կարգադրությամբ հաստատում է հատուկ ցուցակները և անհապաղ փոխանցում է համապատասխան Տեղամասային ընտրական հանձնաժողովին:[9]

Ընտրատարածքային հանձնաժողովը ընտրողների հատուկ ցուցակում մտցնում է.
Ընտրական վարչության պաշտոնյաներին, ովքեր ընտրական հանձնաժողովներում

[7] Վրաստանի Ընտրական Օրենսգիրք, Հոդված 31, Մաս 10:
[8] Վրաստանի Ընտրական Օրենսգիրք, Հոդված 31, Մաս 12, 13:
[9] Վրաստանի Ընտրական Օրենսգիրք, Հոդված 32, Մաս 3:

գործունեության պատճառով քվեարկության օրը ընտրություններին չեն կարող մասնակցել իրենց գրանցման տեղի համաձայն ,

- Ընտրողներին, ովքեր բուժման համար գտնվում են հիվանդանոցում կամ այլ ստացիոնարային բուժական հիմարկությունում,
- Ընտրողներին, ովքեր քվեարկության օրը գտնվում են կալանքի տակ,
- Վրաստանի պաշտպանության և ներքին գործերի նախարարությունների ռազմական (ռազմականացված) ուժերի և միավորումների ժամկետային և պայմանագրային ծառայությունների զինվորական ծառայողներին, ում ծառայողական պայմանները պահանջում են նրանց գտնվելը գրանցման տեղից տարբերվող հասցեով, որը այլ Ընտրատարածքին է պատկանում,
- Քվեարկության օրը այլ պետությունում գտնվող ընտրողներին, ովքեր գտնվում են Վրաստանի հյուպատոսական հաշվառման վրա, ինչպես նաև ընտրողներին, ովքեր հյուպատոսական հաշվառման վրա չեն գտնվում, սակայն մինչև ընտրությունների օրը 21-րդ օրից ոչուշ գրանցում կանցնեն այլ պետությունում ստեղծված տեղամասային ընտրական հանձնաժողովում կամ հյուպատոսական հիմարկությունում:

Ընտրողների հատուկ ցուցակում մտցված Պաշտպանության նախարարության զինվորական ծառայողը, ով քվեարկության օրը համապատասխան տեղակայման տեղում է գտնվում ընտրությունների օրվա համար մշտական կարգով 1 տարով կամ 1 տարուց ավելի ժամկետով, մասնակցում է սակրեբուլոյի ինչպես մեծամասնական, այնպես էլ համամասնական ընտրական համակարգով անցկացվող ընտրություններին և քաղաքապետի/գամգեբելիի ընտրություններին: Իսկ հատուկ ցուցակում մտցված Պաշտպանության նախարարության զինվորալան ծառայողը, ով քվեարկության օրը մշտական տեղակայման տեղում է գտնվում ընտրությունների օրվա համար 1 տարուց պակաս ժամկետով, քվեարկության օրը համապատասխան տեղակայման տեղում մասնակցում է Սակրեբուլոյի համամասնական կարգով անցկացված ընտրություններին, իսկ քաղաքապետի/գամգեբելիի ընտրություններին և Սակրեբուլոյի մեծամասնական ընտրական համակարգով անցկացված ընտրություններին միանում է միայն այն դեպքում, եթե նրա տեղակայման վայրը պատկանում է այն տեղական մեծամասնական ընտրական տարածքի սահմաններին, որտեղ նա գրանցված է ըստ բնակության վայրի:

Վրաստանի ներքին գործերի նախարարության զինվորական ծառայողը, Վրաստանի պետական անվտանգության ծառայության զինվորական ծառայողը, ով քվեարկության օրը համապատասխան տեղակայման տեղում է գտնվում, մասնակցում է տեղական ինքնավարման ներկայացուցչական մարմնի՝ Սակրեբուլոյի համամասնական ընտրական համակարգով անցկացված ընտրություններին: Նա քաղաքապետի/գամգեբելի ընտրություններին և Սակրեբուլոյի մեծամասնական ընտրական համակարգով անցկացված ընտրություններին միայն այն դեպքում է միանում, եթե նրա տեղակայման վայրը, համապատասխանաբար այն ընտրական տարածքի/տեղական մեծամասնական ընտրական տարածքի սահմաններում է, որտեղ նա գրանցված է բնակության վայրի համաձայն:

Ո՞վ կարող է օգտվել շրջիկ ընտրական արկղից:

Շրջիկ ընտրական արկղի ցուցակում մտցված ընտրողները համամասնական և մեծամասնական ընտրական համակարգերով անցկացվող ընտրություններին միայն այն ժամանակ են մասնակցում, եթե ընտրողի գրանցման տեղը և ընտրողի փաստացի գտնվելու վայրը պատկանում են միևնույն ընտրատարածքին: Հակառակ դեպքում ընտրողին տրվում է միայն համամասնական ընտրական համակարգով անցկացված ընտրություններին մասնակցելու իրավունք: Շրջիկ ընտրական արկղի ցուցակը կազմվում է ընտրողների (բացի քվեարկության օրը այլ պետությունում գտնվող ընտրողներից) միասնական և հատուկ ցուցակների հիման վրա: Իսկ դրա ձևակերպումը իրականացնում է տեղամասային ընտրական հանձնաժողովը: Նշված ցուցակը կազմվում է միայն ընտրական ժամանակաշրջանում միասնական և հատուկ ցուցակների հիման վրա և դրանում հայտնվել հնարավոր է միայն հետևյալ դեպքերում.

- Առողջության իրավիճակի պատճառով, ընտրողը անկախ չի կարող ներկայանալ քվեարկության շենք: Շրջիկ ընտրական արկղի ցուցակում մտցված այսպիսի կարգի ընտրողների թվաքանակը ընտրական տեղամասի ընտրական միասնական ցուցակում գոյություն ունեցող ընտրողների 3 տոկոսին չպետք է գերազանցի: Նշված թվաքանակը լրանալուց հետո, ընտրողների շրջիկ ընտրական արկղի ցուցակում ընտրողներ մտցնելու նպատակահարմարության մասին որոշումն ընդունվում է համապատասխան ընտրատարածքային հանձնաժողովի նիստին՝ ներկաների երկու երրորդով,
- Ընտրողը գտնվում է բանտարկության մեջ,
- Ընտրողը բուժվելու համար գտնվում է հիվանդանոցում կամ այլ ստացիոնարային բուժական հիմնարկությունում և տեղում ընտրական տեղամաս չի բացվում,
- Ընտրողը զինվորական ծառայող է, ծառայում է Վրաստանի պետական սահմանին տեղակայված զորամասում, որը գտնվում է ընտրական տեղամասից հեռու, և այնտեղ ընտրական տեղամաս չի բացվում,
- Ընտրողը ընտրական տեղամասի տարածքում է, սակայն գտնվում է դժվար հասանելի տեղում:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը ընտրողին շրջիկ արկղի ցուցակում մտցնում է այն դեպքում, եթե նա ընտրողների միասնական ցուցակում ամրագրված է և նրա փաստացի գտնվելու վայրը այն ընտրական տեղամասի տարածքին է պատկանում, որտեղ նա գրանցված է: Շրջիկ ընտրական արկղի ցուցակում մտցվելիք ընտրողների մասին տեղեկատվությունը անմիջականորեն պետք է փակցվի ընտրական տեղամասում, աչքի ընկնող տեղում:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը շրջիկ ընտրական արկղի ցուցակում ընտրողի մասին նույն տվյալներն է մտցնում, ինչը պարտադիր է ընտրողների միասնական ցուցակի համար (բացի լուսանկարից) և լրացուցիչ նշում է նրա հերթական համարը ընտրողների միասնական կամ հատուկ ցուցակում:

Եթե անձը չի կարող ներկայանալ քվեարկության շենք, նա մինչև ընտրությունները առնվազն 2 օր առաջ պետք է դիմի տեղամասային հանձնաժողովին: Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը Գրանցամատյանում գրանցում կանցկացնի ընտրողի գրավոր կամ հեռախոսազրույցի բանավոր դիմումը, հեռախոսային ծանուցման ճիշտ ժամանակի և համապատասխան հեռախոսահամարի նշումով:[10]

Ինչպե՞ս պետք է դասավորել քվեարկության շենքը:

Անմիջական քվեարկության շենքը դասավորելիս պետք է նախատեսված լինեն հետևյալ պայմանները.

- Ձայն տալու տեղը այնպես պետք է դասավորվի, որպեսզի ապահովված լինի ընտրողի կողմից ընտրական քվեաթերթիկը լրացնելու գաղտնիությունը: Յուրաքանչյուր 500 ընտրողի համար նախատեսված պետք է լինի ոչ պակաս 1 ձայն տալու տեղ, որտեղ պետք է լինի 1 գրիչ:
- Պետք է առանձնացվեն առանձին տեղեր ընտրողներին գրանցելու և հատուկ ծրարները տեղավորելու համար,
- Աչքի ընկնող տեղում պետք է դրված լինի թափանցիկ քվեատուփը,
- Աչքի ընկնող տեղում պետք է փակցվեն ընտրողների ցուցակները, կուսակցական ցուցակները, թեկնածուների ցուցակները, ԿԸՀ-ի կողմից սահմանված ընտրական քվեաթերթիկը լրացնելու կարգը, ինչպես նաև քաղվածք Օրենքից, թե որ դեպքում են անվավեր քվեաթերթիկը և քվեարկության արդյունքների ցուցադրական արձանագրությունը (արձանագրությունները):
- Եթե ընտրական քվեաթերթիկի մեջ մտցված որևէ ընտրական սուբյեկտ ընտրություններին չի մասնակցում, հայտարարությունն այդ մասին պետք է փակցվի աչքի ընկնող տեղում, ինչպես ընտրական տեղամասում, այնպես էլ գաղտնի քվեարկության խցիկում (սենյակում):
- Քվեարկութան գաղտնիությունն ապահովելու համար քվեարկության խցիկում ֆոտո կամ տեսանկարահանումը արգելված է:[11]

Ի՞նչ է կատարվում ընտրությունների օրը:

Ընտրական տեղամասը բացվում է առավոտյան ժամը 7-ին, իսկ քվեարկությունը սկսվում է ժամը 8-ին: Շրջիկ ընտրական արկղի միջոցով քվեարկության ընթացակարգը սկսվում է քվեարկության օրվա ժամը 09:00-ին և ավարտվում ժամը 19:00-ին:

Քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձինք պետք է ունենան ով լինելը և կարգավիճակը հաստատող կրծքանշան: Այս անձինք են.

[10] Վրաստանի Ընտրական Օրենսգիրք, Հոդված 33:
[11] Վրաստանի Ընտրական Օրենսգիրք, Հոդված 58, մաս 4:

- Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները,
- Վերադաս ընտրական հանձնաժողովի անդամները/ներկայացուցիչները,
- Ընտրական սուբյեկտների ներկայացուցիչները (յուրաքանչյուր սուբյեկտի համար 1 ներկայացուցչից ոչ ավելի),
- Գրանցված տեղական դիտորդական կազմակերպության դիտորդները (յուրաքանչյուր կազմակերպությունից 1 դիտորդից ոչ ավելի),
- Գրանցված միջազգային կազմակերպության դիտորդները (յուրաքանչյուր կազմակերպությունից 2 դիտորդից ոչ ավելի, որոնց կարող է ուղեկցել թարգմանիչ),
- Մեդիայի լիազորագրված ներկայացուցիչները (յուրաքանչյուր կազմակերպությունից 3 ներկայացուցչից ոչ ավելի):

Մինչև քվեարկության սկսվելը, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և հանձնաժողովի քարտուղարը լրացնում են Ստուգողական թերթերը (բացի առաջին ընտրողի մասին տվյալներից): Ստուգողական թերթը ստորագրում են տեղամասային ընտրական հանձնաժողովի բոլոր ներկա անդամները: Առաջին ընտրողը ներկայանալիս՝ անցնում է գրանցում և վերցնում է ընտրական քվեաթերթիկներ: Հանձնաժողովի քարտուղարը նրա մասին տվյալները մտցնում է Ստուգողական թերթի մեջ, որը ստորագրում է ընտրողը: Ստուգողական թերթի վրա նշվում է քվեաթերթիկները քվեատուփի մեջ գցելու ճիշտ ժամանակը: Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը Ստուգողական թերթի մեկ օրինակը գցում է հիմնական քվեատուփի մեջ, իսկ երկրորդ օրինակը՝ շրջիկ ընտրական արկղի մեջ (այդպիսինի գոյություն ունենալու դեպքում), իսկ երրորդ օրինակը պահում է՝ ընտրական արկղերում գոյություն ունեցող ստուգողական թերթերի հետ հետագայում համեմատելու նպատակով: [12]

Ամեն մի ընտրող ձայն է տալիս անձամբ: Չի թույլատրվում ձայն տալ այլ անձի փոխարեն:

Առաջին անձը, ով քվեարկության շենք եկած ընտրողին հանդիպում է, ընտրական հանձնաժողովի անդամ է, որն անց է կացնում հետևյալ ընթացակարգերը:

- Կարգավորում է ընտրական տեղամաս մտած ընտրողների հոսքը,
- Խնդրում է ընտրողին, ներկայացնել Վրաստանի քաղաքացու Անձնական վկայական կամ Վրաստանի քաղաքացու Անձնագիր: Նույնականացման փաստաթուղթ չներկայացնելու դեպքում, ընտրողին չի թույլատրվում մասնակցել քվեարկությանը:
- Ուլտրամանուշակագույն լապտերով ստուգում է՝ ունի՞ թե ոչ ընտրողը կատարված դրոշմանշում: Բոլոր ընտրական տեղամասում ընտրողների դրոշմանշումը նախատեսում է աչքով աննկատելի և մարդու առողջության համար անվնաս քիմիական ներկ քսել ընտրողի աջ ձեռքի բութ մատի կամ ցուցամատի եղունգի վրա (նշված գործողության կատարման անհնարինության դեպքում՝ աջ ձեռքի այլ մատի եղունգի վրա, իսկ այսպիսինի անհնարինության դեպքում՝ նույն կարգով՝ ձախ ձեռքի վրա): Եթե դրոշմանշումը ստուգող հատուկ գործիքը հայտնաբերի, որ ընտրողն

[12] Վրաստանի Ընտրական Օրենսգիրք, Հոդված 62, Մաս 10:

արդեն ունի արված դրոշմանշում, նրան արգելվում է մասնակցել քվեարկությանը, իսկ նրա ով լինելը նշվում է քվեարկության օրվա գրառումների գրքում:Դրոշմանշում չի կիրառվում բանտային հիմարկներում, հիվանդանոցներում և այլ ստացիոնարային բուժական հիմարկություններում (հիվանդների նկատմամբ), ինչպես նաև քվեարկությանը շրջիկ ընտրական արկղի միջոցով մասնակցող անձանց նկատմամբ:

- Ստուգում է, թե քանի ընտրող է կանգնած ընտրողների գրանցման համար հատկացված սեղանի մոտ և եթե գրանցման սեղանի մոտ երկուսից ավելի ընտրող է կանգնած, ժամանակավորապես ձգձգում է քվեարկության սենյակ հերթական ընտրողի մուտքը,
- Մատնացույց է անում ընտրողին՝ մոտենալ այն գրանցման սեղանին, որին պատկանում է ընտրողների ցուցակում մտցված նրա ազգանվան առաջին տառը:[13]

Ընտրողների գրանցողն իր հերթին.

- Խնդրում է ընտրողին, ներկայացնել Վրաստանի քաղաքացու Անձը հաստատող վկայական կամ Վրաստանի քաղաքացու Անձնագիր, Վրաստանի բռնագրավված տարածքից բռնի տեղաշարժված անձի դեպքում՝ Տարհանվածի վկայական՝ Վրաստանի քաղաքացու Անձնական վկայականի հետ միասին,
- Ստուգում է ներկայացված փաստաթղթում/փաստաթղթերում մտցված ընտրողի գրանցման տվյալների և ընտրական ցուցակում գոյություն ունեցող տվյալների համապատասխանությունը,
- Ստուգում է ներկայացված փաստաթղթում/փաստաթղթերում և ընտրողների ցուցակում գոյություն ունեցող լուսանկարների և ընտրողի նույնականության միմյանց հետ համապատասխանությունը, անհամապատասխանություն հայտնաբերելու դեպքում, նա դիմում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին, ով իր հերթին հաստատում կամ հերքում է գրանցողի կարծիքը: Հերքման դեպքում, գրանցողը տարակարծությունը արտացոլում է քվեարկության օրվա Գրառումների գրքում: Քվեարկության Գրառումների գրքում նաև ամրագրվում են այնպիսի դեպքերը, երբ լուսանկարի հետ անձի անհամապատասխանությունը հաստատում է նաև նախագահը:
- Կատարում է ընտրողի դրոշմանշում, ինչից չի հրաժարվում ընտրողը, քանզի մերժման դեպքում նրան չի տրվի ընտրական քվեաթերթիկ,
- Ընտրողը ստորագրում է համապատասխան վանդակում, հաստատում է ընտրական քվեաթերթիկ ստանալը,
- Ընտրողը ստորագրում է ընտրական քվեաթերթիկի ետևի էջին մատնացույց արված վանդակում,
- Գրանցողը ընտրական քվեաթերթիկը վավերացնում է ընտրողներին գրանցողի կնիքով: [14]

---

[13] Վրաստանի Ընտրական Օրենսգիրք, Հոդված 64, Հոդված 65:
[14] Վրաստանի Ընտրական Օրենսգիրք, Հոդված 65.

Նշված ընթացակարգերն անցնելուց հետո, ընտրողը մտնում է գաղտնի քվեարկության խցիկ և լրացնում է ընտրական քվեաթերթիկը, երբ անհրաժեշտ է, որ նա միայնակ լինի: Ընտրողը,ով չի կարող անկախորեն լրացնել ընտրական քվեաթերթիկը, իրավունք ունի օգնության համար գաղտնի քվեարկության խցիկ հրավիրել ցանկացած անձի, բացի ընտրական հանձնաժողովի անդամից, թեկնածուից, ընտրական սուբյեկտի ներկայացուցչից և դիտորդից:[15]

Ընտրական քվեաթերթիկը լրացնելուց հետո, ընտրողը գնում է դեպի առանձին դրված սեղանը, վերցնում է հատուկ ծրարը և դրանում տեղավորում է քվեաթերթիկը: Դիտորդը համոզվում է, որ ընտրողը միայն մեկ ծրար ունի ձեռքում, բացում է ընտրական արկղի ճեղքը և մատնացույց է անում ընտրողին ծրարը գցել քվեատուփի մեջ: Քվեատուփի մոտ չի կարելի միաժամանակ մեկից ավելի ընտրող մոտենա: Նշված գործողությունից հետո ընտրողը թողնում է ընտրական տեղամասը:

Քվեարկության ավարտից հետո քվեատուփի մեջ հատուկ ծրարը գցելու ճեղքը անմիջապես կնիքվում է: Շրջիկ ընտրական արկղը ընտրական տեղամաս պետք է վերադառնա ժամը 20-ից ոչ ուշ:

Ի՞նչ դեր են կատարում դիտորդները:

Դիտորդական կազմակերպությունները, որպես ընտրական գործընթացին միացած անկողմնակալ և չեզոք ինստիտուտներ, ապահովում են ընտրությունների մոնիթորինգը, բնակչության և միջազգային կազմակերպություններին ընտրական գործընթացի ընթացքի մասին մատուցում են օբյեկտիվ լրատվություն:

Դիտորդները ստուգում են, թե որքանով են պաշտպանված օրենսդրությունը և համապատասխան կարգավորումները ինչպես նախընտրական ժամանակաշրջանում, այնպես էլ անմիջականորեն ընտրությունների անցկացման ժամանակ և արդյունքը ամփոփելու փուլում:

Տեղական և միջազգային դիտորդները գնահատում են ընտրությունները և տալիս են հանձնարարականներ, թե ինչը կարելի է բարելավել ապագայում ընտրությունները ավելի լավ անցկացնելու համար:

Ո՞վ կարող է լինել դիտորդ:

Տեղական դիտորդական կազմակերպություն կարող է լինել մինչև քվեարկության օրը 1 տարուց ոչուշ գրանցված տեղական ոչձեռներեցային (ոչ կոմերցիոն) իրավաբանական

[15] Վրաստանի Ընտրական Օրենսգիրք, Հոդված 65, մաս 3:

անձը, որի Կանոնադրությունը կամ դրույթները (Հիմնադիր փաստաթուղթ) գրանցման պահին նախատեսում է ընտրությունների մոնիթորինգ կամ/և մարդու իրավունքների պաշտպանություն: Միջազգային դիտորդական կազմակերպություն կարող է լինել այլ պետության ներկայացուցիչ, այլ պետությունում գրանցված կազմակերպություն կամ միջազգային կազմակերպություն, որի հիմնադիր փաստաթուղթը/Կանոնադրությունը նախատեսում է ընտրությունների մոնիթորինգ, մարդու իրավունքների պաշտպանություն և որի գործունեությունը հիմված է հետևյալ միջազգայնորեն ճանաչված սկզբունքների վրա.

- Վրաստանի Օրենսդրության, ինքնիշխանության և մարդու իրավունքների միջազգային նորմերի հարգում,
- Ընտրական գործընթացը խոչընդոտելուց խուսափում,
- Քաղաքական անկողմնակալություն,
- Ընտրական գործընթացի մասնակիցներից ֆինանսական անկախություն և ֆինանսավորման աղբյուրների թափանցիկություն,
- Միջազգային ընտրական դիտարկման սկզբունքների Հռչակագրով ճանաչված դրույթների պաշտպանություն:

Ի՞նչ իրավունքներ ունեն դիտորդը և ընտրական սուբյեկտի ներկայացուցիչը:

Դիտորդը, ընտրական սուբյեկտի ներկայացուցիչն իրավունք ունի.

- Քվեարկության օրը, ցանկացած ժամանակ գտնվել քվեարկության շենքում, անսահմանափակորեն տեղաշարժվել ընտրական տեղամասի տարածքում և ազատ, առանց խոչընդոտների դիտարկել քվեարկության գործընթացի բոլոր փուլերը ցանկացած տեղերից,
- Քվեարկության օրը, ցանկացած ժամանակ փոխարինել իրեն ներկայացրած կազմակերպության կողմից գրանցված այլ ներկայացուցչին,
- Ներկա գտնվել և դիտարկել ընտրական հանձնաժողովի նիստերը,
- Մասնակցել ընտրական քվեատուփերի ստուգմանը մինչև դրանց կնիքումը և դրանց բացումից հետո,
- Դիտարկել ընտրողների ցուցակներում ընտրողների գրանցումը, ընտրական քվեաթերթիկներ և հատուկ ծրարներ տալը և դրանց վավերացումը առանց քվեարկության գործընթացին խոչընդոտելու,
- Ներկա գտնվել ընտրողների ձայների հաշվման և արդյունքների ամփոփման ընթացակարգերին,
- Դիտարկել շրջիկ ընտրական արկղի միջոցով ձայն տալու գործընթացը,
- Դիտարկել ընտրողների ձայները հաշվելուն այնպիսի պայմաններում, որոնք ապահովում են ընտրական քվեաթերթիկների տեսանելիությունը,
- Դիտարկել ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության և այլ փաստաթղթերի կազմումը,
- Դիմումով (բողոքով) դիմել տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին

ձայն տալու և քվեարկության ընթացակարգերի հետ կապված հարցեր և կոնկրետ խախտումներ ամրագրելու դեպքում, դիմումով (բողոքով) դիմել տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին և պահանջել արձագանք,

- Պահանջել ընտրողից, ցույց տալ՝ քանի ընտրական քվեաթերթիկ և հատուկ ծրար ունի ձեռքում,
- Բողոքարկել ընտրական հանձնաժողովի արարքը Վրաստանի օրենսդրությամբ սահմանված կարգով,
- Դիտարկել ընտրական քվեատուփը, ընտրական քվեատուփում հատուկ ծրարներ գցելը, ընտրական քվեատուփերի բացումը, ընտրական քվեաթերթիկների հաշվումը և արձանագրությունների կազմումը, ծանոթանալ ընտրական հանձնաժողովների կողմից կազմված քվեարկության և ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրություններին,համապատասխան ընտրական հանձնաժողովից պահանջել և ստանալ այս արձանագրությունների պատճենները:

Դիտորդը, ընտրական սուբյեկտի ներկայացուցիչն իրավունք չունի.

- Միջամտել ընտրական հանձնաժողովի գործառույթներին և գործունեությանը,
- Ազդեցություն գործել ընտրողների կողմից կամքի ազատ արտահայտման վրա,
- Քարոզչություն անել ընտրողին որևէ ընտրական սուբյեկտի օգտին կամ դեմ,
- Կրել որևէ մի ընտրական սուբյեկտի խորհրդանշանը կամ նշանը,
- Քվեարկության օրը քվեարկության շենքում գտնվել առանց կրծքանշանի:[16]

Ի՞նչ իրավունքներ ունեն մեդիայի ներկայացուցիչները:

Դիմումը մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցների ներկայացուցիչների հավաստագրման մասին ներկայացվում է համապատասխան ընտրական հանձնաժողովին՝ մինչև քվեարկության օրը 3-րդ օրվանից ոչուշ: Կոնկրետ ընտրական հանձնաժողովում հավաստագրված մեդիայի ներկայացուցիչները ունեն քվեարկության օրը քվեարկության շենքում գտնվելու իրավունք: Քվեարկության օրը մեդիայի միևնույն կազմակերպությունը իրավունք ունի, ընտրական տեղամասում միաժամանակ ունենալ 3 ներկայացուցչից ոչ ավելի:

Դիմումը ներկայացնելուց 1 օրվա ժամկետում համապատասխան ընտրական հանձնաժողովի քարտուղարը վճռում է մեդիայի ներկայացուցիչների հավաստագրման հարցը և որոշում ընդունելուց 1 օրվա ժամկետում նրանց հավաստագրման պատշաճ վկայական, իսկ հավաստագրումը մերժելու դեպքում, նույն ժամկետում պատշաճ, հիմնավորված կարգադրություն ունենալը: [17]

Արգելվում է մինչև քվեարկությունը 48 ժամվա ընթացքում և մինչև քվեարկության օրվա ժամը 20-ը հրապարակել ընտրությունների հետ կապված հասարակական

[16] Վրաստանի ընտրական Օրենսգիրք, Հոդված 41:
[17] Վրաստանի ընտրական Օրենսգիրք, Հոդված 44:

կարծիքի հարցման արդյունքները, բացի ընտրությունների հնարավոր մասնակիցների և քվեարկության օրը ընտրությունների մասնակիցների թվաքանակից:

ԿԸՀ-ի N42/2012 որոշումը պարզաբանում է այն ընթացակարգերը, որոնք քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձինք պետք է պաշտպանեն:[18]

Այս որոշման համաձայն, ընտրական տեղամասը բացելուց (առավոտյան ժամը 7) մինչև տեղամասային ընտրական հանձնաժողովների ամփոփիչ արձանագրությունները կազմելու ժամանակաշրջանը ներառյալ, քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանց հետ հարցազրույց ձայնագրել թույլատրվում է միայն քվեարկության շենքից դուրս: Բացի դրանից, քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձինք կարող են նկարահանել ընտրությունների ընթացքի գործընթացը: Ֆոտո/տեսանկարահանում քվեարկության շենքում հնարավոր է հանձնաժողովի նախագահի կողմից հատկացված հատուկ տեղից (այնպես, որ երևա ընտրական քվեատուփը), որտեղից երևում է ընտրական գործընթացը: Ցանկացած անձի նկարահանման համար նվազագույն հեռավորությունը առնվազն 3 մետրով պետք է լինի հեռացած նկարահանման սուբյեկտից/օբյեկտից: Հարցազրույց ձայնագրելու և ֆոտո/տեսանկարահանումը այնպես պետք է կատարվի, որ չխոչընդոտի ընտրական գործընթացը:

Բացի դրանից, այն տեղամասերում, որտեղ բարձր հասարակական հետաքրքրություն ունեցող ընտրողներ (քաղաքական պաշտոնյաներ, ընտրական սուբյեկտների և քաղաքական միավորումների ղեկավարներ, կրոնական առաջնորդներ) են ձայն տալիս, թույլատրվում է քվեարկության գործընթացը նկարահանել ոչ միայն հատուկ հատկացված տեղից: Այս դեպքում, մեդիա ներկայացուցիչները կարող են գործընթացը նկարահանել 10 րոպեից ոչ ավելի, որից հետո նրանք կամ պետք է թողնեն տեղամասը, կամ զբաղեցնեն շենքում հատկացված հատուկ տեղը:

Այս կանոնները խախտելու դեպքում, տեղամասային ընտրական հանձնաժողովը, ձայների մեծամասնությամբ, ընդունում է որոշում համապատասխան անձին քվեարկության շենքից վտարելու մասին:

Ինչպիսի՞ն են խախտումները բողոքարկելու ընթացակարգերը:

Դիմումը/բողոքը փոխանցվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին, նրա տեղակալին կամ հանձնաժողովի քարտուղարին: Հանձնաժողովի քարտուղարը մուտքագրում է դիմումը/բողոքը Գրառումների գրքում, իսկ դիմողին/բողոքարկուին տալիս է տեղեկանք (իր ստորագրությամբ), որտեղ նշվում է համապատասխան դիմումի/բողոքի հանձնաժողովում ընդունելու ամսաթիվը, ժամանակը և մուտքագրման թիվը:

[18] https://matsne.gov.ge/ka/document/view/1748403

Դիմումում/բողոքում նշվում է.

ա) Դիմումը/բողոքը կազմելու ամսաթիվը և ժամանակը,
բ) Դիմողի/բողոքարկուի անունը, ազգանունը և գրանցման տեղը,
գ) Ընտրական տեղամասի թիվը,
դ) Վկայի գոյություն ունենալու դեպքում՝ նրա անունը, ազգանունը և գրանցման տեղը,
ե) Խախտման էությունը և այն կատարելու ժամանակը,
զ) Խախտումը սահմանելու դեպքում՝ նրա այն տվյալները, որոնք հնարավոր դարձավ սահմանել,
է) Խախտման բացատրագիրը (նման գոյության դեպքում),
ը) Այլ հավելյալ տեղեկատվություն:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը պարտավոր է դիմումին/բողոքին անհապաղ համարժեք արձագանքել և արմատախիլ անել գոյություն ունեցող խախտումը: Եթե հանձնաժողովի նախագահը չի անում կամ չի կարողանում արմատախիլ անել խախտումը կամ այլ ձևով հրաժարվում է դիմումին/բողոքին արձագանքել, դիմողը/բողոքողը իրավունք ունի այդ նույն խախտման մասին անմիջապես դիմում/բողոք ներկայացնել վերադաս համապատասխան ընտրատարածքային հանձնաժողովին: Ընտրատարածքային հանձնաժողովը պարտավոր է ձեռնարկել համապատասխան միջոցներ խախտումը վերացնելու համար և նշված դիմումը/բողոքը քննարկելիս դատողություն անել համապատասխան տեղամասի արդյունքների անվավերության հարցի մասին:[19]

Ընտրական օրենսգիրը առանձին է խոսում քվեարկության և ձայները հաշվելու ընթացակարգերի խախտման հարցով դիմումների և բողոքների մասին:

- Ընտրական տեղամասում քվեարկության ընթացակարգի խախտման մասին դիմումը/բողոքը պետք է կազմված լինի այս օրենքի խախտումը նկատելուն պես, քվեարկության օրվա ժամը 7-ից մինչև ընտրական քվեատուփի բացումը:
- Դիմումը/բողոքը ձայները հաշվելու և քվեարկության արդյունքների ամփոփման ընթացակարգերի ժամանակ կատարված խախտումների մասին և քվեարկության արդյունքների վերստուգման կամ անվավեր ճանաչելու պահանջով պետք է կազմված լինեն ընտրական քվեատուփի բացումից մինչև քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության կազմումը:

Նշված դիմումը/բողոքը Ընտրատարածքային հանձնաժողովի քարտուղարը այն ստանալուն պես մուտքագրում է Ընտրատարածքային հանձնաժողովի Գրանցամատյանում: Հանձնաժողովն այն քննարկումներ որոշումը ընդունում է Ընտրատարածքային հանձնաժողովում դիմումը/բողոքը մուտքագրելուց 2 օրվա ժամկետում: Ընտրատարածքային հանձնաժողովը որոշում ընդունում է կարգադրությամբ, որը կարող է բողոքարկվել միայն դատարանում:[20]

Դատարան հայցը/բողոքը մտցված է համարվում դատարանում դրա մուտքագրման պահից: Դատարանում հայցի/բողոքի մտցնումը բողոքարկված որոշման գործողությունը

[19] Վրաստանի Ընտրական Օրենսգիրք, Հոդված 72:
[20] Վրաստանի Ընտրական Օրենսգիրք, Հոդված 73, Հոդված 74:

չի կասեցնում: Դատարանում հայցը/բողոքը մտցնելու դեպքում, դատարանը պարտավոր է անհապաղ տեղեկացնել համապատասխան Ընտրատարածքային հանձնաժողովին/ԿԸՀ-ին հայցը/բողոքը ընդունելու մասին: Որոշում կայացնելուց հետո դատարանը պարտավոր է, համապատասխան Ընտրատարածքային հանձնաժողովին/ԿԸՀ-ին անհապաղ տեղեկացնել որոշման մասին: Շրջանային/քաղաքային դատարանի որոշումը կողմերին պետք է փոխանցվի մինչև հաջորդ օրվա ժամը 12-ը:

Ձայները հաշվելու ընթացակարգ

Քվեարկության ընթացակարգը ավարտվում և քվեարկության շենքը փակվում է ժամը 20:00-ին: Այդ ժամին հերթում կանգնած ընտրողները կարող են ձայն տալ: Այն բանից հետո, երբ վերջին ընտրողը ձայն կտա, քվեարկությունը հայտարարվում է ավարտված, որից հետո տեղամասային ընտրական հանձնաժողովը կնիքում է ընտրական քվեատուփի ճեղքը: Տեղամասային ընտրական հանձնաժողովը կարող է քվեարկությունը ավարտված հայտարարել մինչև ժամը 20-ը, ցանկացած ժամանակ, եթե քվեարկությանը մասնակցել են ընտրողների ցուցակում մտցված բոլոր ընտրողները: Քվեարկության օրվա Գրառումների գրքում պետք է նշվի ձայները հաշվելու ժամանակ քվեարկության շենքում գտնվող անձանց ով լինելը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ, հանձնաժողովի անդամներից վիճակահանությամբ ընտրում է առնվազն 3 հաշվողի, իսկ դիտորդները իրենց կազմից փոխհամաձայնությամբ ընտրում են երկու դիտորդից ոչ ավելի: Եթե դիտորդները չեն համաձայնում, հանձնաժողովի նախագահը վիճակահանությամբ բացահայտում է նրանցից երկու դիտորդի: Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, ընտրական տեղամասում գտնվող ընտրական սուբյեկտի ներկայացուցիչներից, վիճակահանությամբ բացահայտում է 2 ներկայացուցիչներից ոչ ավելի, ովքեր հանձնաժողովի անդամներից վիճակահանությամբ բացահայտված հաշվողների հետ միասին մասնակցում են իսկական կամ/և անվավեր ընտրական քվեաթերթիկները հաշվելու գործընթացին:[21]

Հաշվողները ընտրական քվեատուփը տեղափոխում են առանձին դրված սեղանի վրա և այնպես են տեղեր զբաղեցնում, որ հանդիպակաց կողմում, երկու մետր հեռավորությամբ գտնվեն տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները և քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձինք: Հաշվողների կողքին գտնվում են դիտորդներից բացահայտված երկու դիտորդ և երկու ներկայացուցիչ:

Հաշվողները հաշվում են քվեարկությանը մասնակցած ընտրողների ընդհանուր թվաքանակը.

[21] Վրաստանի Ընտրական Օրենսգիրք, Հոդված 67:

- Ընտրողների ընդհանուր ցուցակի համաձայն,
- Ընտրողների հատուկ ցուցակի համաձայն,
- Շրջիկ ընտրական արկղի ցուցակի համաձայն:

Դիտորդներից բացահայտված մեկ հետևող կանգնում է երկրորդ հաշվողի մոտ, իսկ երկրորդ հետևողը՝ երրորդ հաշվողի մոտ: Նրանք իրավունք ունեն դիտարկել հաշվելու ողջ ընթացակարգը, մատնացույց անել սխալը, պահանջել սխալը ուղղել, իսկ պահանջը չկատարելու դեպքում, տեղամասային ընտրական հանձնաժողովի գործողությունը բողոքարկել վերադաս Ընտրատարածքային հանձնաժողովում, իսկ այնուհետև՝ դատարանում: Քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձինք իրավունք ունեն մատնացույց անել հաշվողներին՝ առանձին դնել այն ընտրական քվեաթերթիկները, որոնց իսկականությունը համարվում է կասկածելի:

Տեղամասային ընտրական հանձնաժողովը նախ և առաջ բացում է շրջիկ ընտրական արկղը: Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անդամների և քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ ստուգում է ընտրական քվեատուփի կնիքի ամբողջականությունը: Եթե կնիքի ամբողջականությունը հայտնվի խախտված, սակայն հանձնաժողովը գտնի, որ դա չի առաջացրել օրենքի պահանջների խախտում, հանձնաժողովի կարգադրությամբ, քվեարկության արդյունքները ամփոփելու ընթացակարգը շարունակվում է: Հակառակ դեպքում ընտրական քվեատուփը կնիքվում և տեղամասային ընտրական հանձնաժողովի կարգադրության հետ միասին անհապաղ փոխանցվում է վերադաս Ընտրատարածքային հանձնաժողովին:

Հաշվողները շրջիկ ընտրական արկղում գոյություն ունեցող հատուկ ծրարները տեղադրում են սեղանի վրա, որից հետո էլ.

- Ստուգում են շրջիկ ընտրական արկղում Ստուգողական թերթի առկայությունը,
- Շրջիկ ընտրական արկղում գոյություն ունեցող Ստուգողական թերթը համեմատում են հանձնաժողովում համեմատության նպատակով պահված Ստուգողական թերթի հետ:

Եթե խախտում չի բացահայտվում, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը ցուցում է տալիս հաշվողներին, հատուկ ծրարները ժամանակավորապես վերադարձնել շրջիկ ընտրական արկղի մեջ: Եթե շրջիկ ընտրական արկղում Ստուգողական թերթը չի հայտնվի կամ Ստուգողական թերթերի միջև կբացահայտվի տարբերություն, բոլոր հատուկ ծրարները և ընտրական քվեաթերթիկները կհավաքվեն մեկ փաթեթով և վրան կգրվի «Անվավեր»: Ընտրական տեղամասում քվեարկության և ձայները հաշվելու ընթացակարգերի ավարտումից հետո փաստաթղթերը կփոխանցվեն վերադաս Ընտրատարածքային հանձնաժողովին:

Այնուհետև բացվում է հիմնական քվեատուփը: Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անդամների և քվեարկության շենքում

գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ ստուգում է ընտրական քվեատուփի կնիքի ամբողջականությունը: Եթե կնիքի ամբողջականությունը հայտնվի խախտված, սակայն հանձնաժողովը գտնի, որ դա չի առաջացրել օրենքի պահանջների խախտում, հանձնաժողովի կարգադրությամբ, քվեարկության արդյունքները ամփոփելու ընթացակարգը շարունակվում է: Հակառակ դեպքում ընտրական քվեատուփը կնիքվում և տեղամասային ընտրական հանձնաժողովի կարգադրության հետ միասին անհապաղ փոխանցվում է վերադաս Ընտրատարածքային հանձնաժողովին: Հաշվողները.

- Հիմական ընտրական քվեատուփում եղած հատուկ ծրարները և ընտրական քվեաթերթիկները տեղավորում են սեղանի վրա,
- Ստուգում են հիմական ընտրական քվեատուփում Ստուգողական թերթի առկայությունը և հիմական ընտրական քվեատուփում գոյություն ունեցող Ստուգողական թերթը համեմատում են հանձնաժողովում համեմատության նպատակով պահված Ստուգողական թերթի հետ:

Եթե հիմական ընտրական քվեատուփում Ստուգողական թերթը չի հայտնվի կամ Ստուգողական թերթերի միջև կբացահայտվի տարբերություն, բոլոր հատուկ ծրարները և ընտրական քվեաթերթիկները փաթեթավորվում են և կնիքվում, կազմվում է համարժեք արձանագրություն և անհապաղ փոխանցվում է վերադաս Ընտրատարածքային հանձնաժողովին:

Անվավեր քվեաթերթիկները կապում են առանձին տրցակով և վրան նշվում է դրանց ընդհանուր թվաքանակը: Սահմանված նմուշի ընտրական քվեաթերթիկը միայն այն դեպքում է համարվում անվավեր, եթե.

ա) Ընտրական քվեաթերթիկը վավերացված չէ ընտրողներին գրանցողի ստորագրությամբ և հատուկ կնիքով,
բ) Անհնար է որոշել, թե որ ընտրական սուբյեկտին է ձայն տվել ընտրողը,
գ) Հատուկ ծրարում բացահայտվում է սահմանված թվաքանակից ավելի ընտրական քվեաթերթիկ,
դ) Հատուկ ծրարը չի համապատասխանում սահմանված նմուշին,
ե) Ընտրական քվեաթերթիկը ընտրական քվեատուփում հայտնվել է առանց հատուկ ծրարի,
զ) Ընտրական քվեաթերթիկը հատկացված է այլ ընտրական տեղամասի:

Առաջին հաշվողը հատուկ ծրարից վերցնում է ընտրական քվեաթերթիկը, հայտարարում է ում է տրված ձայնը, և միևնույն տեսակի ընտրական քվեաթերթիկը փոխանցում է երկրորդ հաշվողին, երկրորդ տեսակը՝ երրորդ հաշվողին և այլն, իսկ հատուկ ծրարը դնում է առանձին: Հաշվողները ընտրական քվեաթերթիկները դասավորում են առանձին-առանձին, յուրաքանչյուր ընտրական սուբյեկտին տրված ձայներին համապատասխան: Առանձին են դասավորվում անհասկանալի նմուշի և հաշվողների

կողմից անվավեր համարվող ընտրական քվեաթերթիկները, առանձին այն ընտրական քվեաթերթիկները, որոնց իսկականությունը համարվում է կասկածելի:

Ընտրական քվեաթերթիկները տեսակավորելուց հետո տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հաշվողներին ցուցում է անում հաշվել.

- Անվավեր թվացող ընտրական քվեաթերթիկները,
- Յուրաքանչյուր ընտրական սուբյեկտին տրված ձայները:

Ընտրական սուբյեկտին պատկանող յուրաքանչյուր 10 ընտրական քվեաթերթիկ կապվում է մետաղե կապիչով և ամեն մի կապոցի վրա, ինչպես լրիվ, այնպես էլ ոչլրիվ, գրվում է ընտրական քվեաթերթիկների թվաքանակը: Այս կապոցները, իրենց հերթին կապվում են տրցակներով: Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հայտարարում է յուրաքանչյուր ընտրական սուբյեկտի կողմից ստացած ձայների թվաքանակը: Հանձնաժողովի քարտուղարը հանձնաժողովի նախագահի հետ միասին, տվյալների ճշգրտությունը վերստուգելու նպատակով, ստուգում է միմյանց համապատասխանու՞մ են, թե ոչ ընտրական սուբյեկտների կողմից ստացած ձայների թվաքանակությունը և անվավեր ընտրական քվեաթերթիկների գումարը ընտրողների ստորագրությունների թվաքանակին: Ընտրական սուբյեկտին պատկանող ընտրական քվեաթերթիկների տրցակը և անվավեր ընտրական քվեաթերթիկները կնիքվում են միայն այս համապատասխանությունը սահմանելուց հետո:

Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրության կազմում և արդյունքների հայտարարում

Տեղամասային ընտրական հանձնաժողովի քարտուղարը, ընտրական քվեաթերթիկները կնիքելուց հետո, տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի համաձայնությամբ, լրացնում է քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը/արձանագրությունները: Հանձնաժողովի բոլոր անդամները պարտավոր են ստորագրել քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունը/արձանագրությունները: Եթե հանձնաժողովի անդամը չի համաձայնում քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրություններում մտցված տվյալներին, նա իրավունք ունի դրանց կցել գրավոր տարբերվող կարծիքը, սակայն պարտավոր է ստորագրել արձանագրությունները:Քվեարկությանարդյունքների ամփոփիչարձանագրությունները վավերացվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի հատուկ կնիքով:

Տեղամասային ընտրական հանձնաժողովը պարտավոր է քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունների պատճենները փակցնել հրապարակավ: Հանձնաժողովը քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունների պատճենները, գոյություն ունենալու դեպքում կցված տարակարծության հետ միասին, պահանջելու դեպքում անհապաղ փոխանցելու է քվեարկության շենքում գտնվելու իրավունք ունեցող բոլոր անձանց:

Բոլոր ընթացակարգերի ավարտումից հետո տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը և քվեարկության օրվա Գրառումների գիրքը փակվում են: Քվեարկության օրվա Գրառումների գիրքը ստորագրում են հանձնաժողովի նախագահը և քարտուղարը և այն վավերացվում է հանձնաժողովի հատուկ կնիքով:

Քվեարկության արդյունքների ամփոփիչ արձանագրությունները չեն կնիքվում: Տեղամասային ընտրական հանձնաժողովը կնիքում է.

- Քվեարկության օրվա Գրառումների գիրքը դիմումների/բողոքների հետ միասին,
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը,
- Տեղամասային ընտրական հանձնաժողովի հատուկ կնիքը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի լիազորված անձինք Ընտրատարածքային հանձնաժողովին կփոխանցեն ընտրական գույքը և ընտրական փաստաթղթերի արկղը/տոպրակը՝ տեղադրված կնիքված ընտրական փաստաթղթերով: Այդ կապակցությամբ կազմվում է ընդունման-հանձնման ակտ: Ընդունման-հանձնման ակտը ստորագրում են ընտրական փաստաթղթերը տվող և ընդունող անձինք, որից հետո էլ ամեն մեկին կփոխանցվի ակտի մեկական օրինակ:

Ընտրատարածքային հանձնաժողովը տեղամասային ընտրական հանձնաժողովների ամփոփիչ արձանագրությունների հիման վրա, Վրաստանի ընտրական օրենսդրության խախտման քննարկումների արդյունքների հաշվառումով, քվեարկության օրվանից 11-րդ օրից ոչ ուշ ամփոփում է հանրաքվեի, Վրաստանի նախագահի ընտրությունների, Վրաստանի խորհրդարանի ընտրությունների, տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմնի՝ Սակրեբուլոյի, քաղաքապետի/գամգեբելիի ընտրությունների արդյունքները, Վրաստանի խորհրդարանի, Սակրեբուլոյի և քաղաքապետի/գամգեբելիի ընտրությունների արդյունքները և կազմում է Ընտրատարածքում անցկացված քվեարկության և ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրությունները, որոնք հաջորդ օրվանից ոչ ուշ փոխանցվում են ԿԸՀ-ին: Ընտրատարածքային հանձնաժողովի ամեն անդամ, ով ներկա է հանձնաժողովի նիստին, պարտավոր է ստորագրել քվեարկության/ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրությունը: Արձանագրությունը վավերացվում է Ընտրատարածքային հանձնաժողովի կնիքով: Եթե Ընտրատարածքային հանձնաժողովի անդամը չի համաձայնում քվեարկության/ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրության մեջ մտցված տվյալներին, նա իրավունք ունի արձանագրության մեջ նշել, որ չի համաձայնում և արձանագրությանը կցել գրավոր տարակարծությունը: Ընտրատարածքային հանձնաժողովը ընտրական տարածքում անցկացված քվեարկության և ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրությունները հաջորդ օրվանից ոչ ուշ փոխանցում է ԿԸՀ-ին: Ընտրատարածքային հանձնաժողովի ամփոփիչ արձանագրության պատճեն, դրա պահանջման դեպքում, անհապաղ փոխանցվում է կուսակցության/ընտրական դաշինքի/նախաձեռնողական խմբի ներկայացուցիչներին և դիտորդական կազմակերպության դիտորդներին:

ԿԸՀ-ն Ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովներից ստացած արձանագրությունների հիման վրա, քվեարկության օրվանից 19-րդ օրից ոչ ուշ, իր նիստում ամփոփում է Վրաստանի խորհրդարանի, Վրաստանի նախագահի, քաղաք Թբիլիսիի քաղաքապետի և քաղաք Թբիլիսիի Սակրեբուլոյի ընտրությունների արդյունքները և կազմում է ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրությունը: Ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրությունը ստորագրում են ԿԸՀ-ի նախագահը և ԿԸՀ-ի քարտուղարը: Արձանագրության պատճենները փոխանցվում են բոլոր շահագրգիռ անձանց:

Ընտրությունների վերջնական արդյունքներն ամփոփելուց անմիջապես հետո, ԿԸՀ-ն իր կայք-էջի վրա հրապարակում է տեղեկություն ընտրությունների արդյունքների մասին ամեն մի ընտրական տեղամասի համաձայն և հաջորդ օրվանից ոչ ուշ այն փոխանցում է մամուլին և զանգվածային լրատվության այլ միջոցներին:

Ընտրությունների արդյունքները ուժի մեջ են մտնում ԿԸՀ-ի կողմից ընտրությունների արդյունքների ամփոփիչ արձանագրությունը հրատարակելուն պես:

Մաս III

Գործընթացին ընդգրկվածություն ընտրություններից հետո

Ի՞նչն է կարևոր ընտրություններից հետո:

Ընտրությունների գործընթացը ընտրությունները ավարտվելու հետ միասին չի ավարտվում:

Ժողովրդավարական հասարակությունը հիմնվում է այն հավատքի վրա, որ յուրաքանչյուր քաղաքացու ձայնը ազդեցություն է գործում որոշում ընդունելու գործընթացի վրա: Միջոցներից մեկը ընտրությունների անցկացումը և ներկայացուցիչների ընտրությունն է: Ինչպես նաև ուղիներից մեկը անհատների և տարբեր խմբերի խրախուսումն է, որպեսզի բարձրաձայնեն սեփական կարծիքները, պաշտպանեն դրանք և կատարեն գործնական քայլեր: Ակտիվ քաղաքացիությունը ենթադրում է մասնակցություն ոչ միայն ընտրությունների օրը, այլև ապահովել իշխանության գործունեության մշտական վերահսկումը և նրա հաշվետու լինելը: Մենք կարող ենք.

- Ընդգրկվել տարբեր քաղաքացիական ակտիվություններին,
- Ստեղծենք բլոգներ, հրատարակենք լրագրեր, անցկացնենք քարոզարշավներ և օգտագործենք սոցիալական մեդիան այս նպատակի համար,
- Կազմենք պետիցիաներ և կատարենք այն նախաձեռնությունների լոբբիացում, որոնք մեզ և տարբեր շահագրգիռ կողմերի համար կարևոր են,
- Մասնակցենք տարբեր հասարակական համաժողովների,
- Պահանջենք հանրային լրատվությունը, որը իշխանության աղբյուրն է և հնարավորություն է տալիս վերահսկելու մեր կողմից ընտրված իշխանությունը:

Ինչպե՞ս պահանջենք հանրային լրատվությունը:

Լրատվության ազատություն

Այն բանի համար, որպեսզի քաղաքացիները վերահսկեն իրենց կողմից ընտրված իշխանությունը և լիարժեք մասնակցեն պետության կառավարմանը, նրանք

պետք է տիրապետեն հանրային լրատվությանը: Պետությունը ֆինանսավորվում է քաղաքացիների կողմից վճարված հարկերով: Համապատասխանաբար, հասարակությունն ունի լրիվ իրավունք, պահանջելու հանրային լրատվություն իշխանության գործունեության և այն որոշումների մասին, որոնք ընդունվում են նրա անունից: Պետական մարմինների թափանցիկությունը ներկայացնում է ժողովրդավարական կառավարման անպայման պայմանը:

Նշված իրավունքը պաշտպանված է Վրաստանի Սահմանադրությամբ և երաշխավորված է ընդհանուր վարչական Օրենսգրքի լրատվության ազատության մասին գլխով: Սահմանադրության 24-րդ Հոդվածի համաձայն «Ամեն մարդ ունի իրավունք ազատ կերպով ստանալու և տարածելու լրատվություն, արտահայտելու և տարածելու իր կարծիքը բանավոր, գրավոր կամ այլ տեսակ միջոցով»:

Ի՞նչ է հանրային լրատվությունը:

Հանրային լրատվությունը դա պաշտոնական փաստաթուղթ է (այդ թվում գծագիր, մոդել,պլան, սխեմա, լուսանկար, էլեկտրոնային լրատվություն, տեսա և ձայնային ձայնագրություններ),այսինքն՝ հանրային հիմարկությունում պաշտպանված, ինչպես նաև հանրային հիմարկության կամ ծառայողի կողմիցծառայողական գործունեության հետ կապված ընդունված, մշակված, ստեղծված կամ ուղարկված լրատվություն:

Ու՞մ վրա է տարածվում հանրային լրատվություն տալու պարտավորությունը:

Լրատվության մատչելիության պահանջը տարածվում է ոչ միայն պետական հիմարկությունների, այլև տեղական ինքնակառավարման և կառավարման մարմնի, ինչպես նաև հանրային իրավունքի իրավաբանական անձանց վրա: Ընդհանուր վարչական օրենսգիրքը բոլոր այսպիսի հիմարկությունը հանրային հիմարկություն է անվանում:

Ո՞վ է ներկայացնում հանրային հիմարկությունը:

Հանրային հիմարկություն է համարվում ցանկացած անձ, ով օրենսդրության հիման վրա, կատարում է հանրային լիազորություններ այս լիազորությունները իրականացնելիս:

Ո՞վ կարող է պահանջել հանրային լրատվություն:

Հանրային լրատվությունը պետք է լինի բաց և այն ստանալ կարող է ցանկացած իրավաբանական և ֆիզիկական անձ՝ չնայած նրա քաղաքացիությանը: Վրաստանի

Ընդհանուր վարչական օրենսգրքի 37-րդ Հոդվածի համաձայն, «**Բոլորն ունեն իրավունք պահանջելու հանրային լրատվություն, չնայած դրա ֆիզիկական ձևի և պահպանելու իրավիճակին և ընտրելու հանրային լրատվություն ստանալու ձևը**»:

Ո՞ր դեպքում լրատվություն չի տրվում:

Լրատվության բաց լինելը սահմանափակված է երկու դեպքում. երբ դա օրենքով է նախատեսված և երբ սահմանված կարգով այն պատկանում է պետական, կոմերցիոն և անձնական գաղտնիքին:

Հանրային հիմնարկությունը միայն օրենքով ճշգրիտ սահմանված դեպքերում իրավունք ունի գաղտնիացնել այս կամ այն լրատվությունը: Այդպիսի դեպքերում հանրային հիմնարկությունը պետք է հիմնավորի, որ նորմի հիման վրա կատարվեց լրատվության գաղտնիացում: Գաղտնիացված լրատվությանը պետք է շնորհվի «Գաղտնի» գրիֆ: Գաղտնի լրատվությունների շրջանում ամենանշանակալիցը ներկայացնում է պետական գաղտնիքը: Այս կամ այն լրատվությունը պետական գաղտնիք համարելը պետք է կատարվի «Պետական գաղտնիքի մասին» Վրաստանի 1996 թվականի օրենքի համաձայն: Այս օրենքի համաձայն, պաշտոնյա անձանց միայն սահմանափակ շրջանն ունի այս կամ այն լրատվությանը պետական գաղտնիք վերագրելու լիազորություն:

Ու՞մ վրա է դրվում պատասխանատվությունը գաղտնի լրատվության հայտածման դեպքում:

Գաղտնի լրատվության անօրեն ձեռք բերումը, հրապարակումը կամ տարածումը անթույլատրելի է, թերևս եթե գաղտնի փաստաթուղթը կամ նյութը իր հերթին պարունակում է այս կամ այն պաշտոնյա անձի անօրեն գործունեության, կաշառակերության, գործարքների կամ այլ այսպիսի փաստերի տեղեկացման լրատվություն, որի նկատմամբ էլ գոյություն ունի բարձր հանրային հետաքրքրություն, Վրաստանի Օրենսդրությունը պաշտպանում է տեղեկացնող անձին: Վրաստանի օրենքը «Խոսքի և արտահայտման ազատության մասին»[22] բացահայտման ազատությունը և տեղեկացնողների պաշտպանությունը դնում է արտահայտման ազատության շրջանակում: Օրինակ, այն դեպքում, եթե հանրային հիմնարկության աշխատակիցը հրապարակում է իր ձեռքին եղած լրատվությունը, որի պաշտպանությունը որպես ծառայություն նրա պարտականությունն է, թերևս հրապարակումը ծառայում է անօրինության բացահայտմանը, նրա վրա պատասխանատվություն չի դրվում:

[22] Վրաստանի օրենք «Խոսքի և արտահայտման ազատության մասին» 3-րդ Հոդվածի առաջին կենտի «ը» ենթակետ:

Ինչպե՞ս պահանջենք հանրային լրատվություն:

Վրաստանում լրատվություն պահանջելու համար սահմանված է գրավոր ընթացակարգ: Համապատասխան հանրային հիմնարկությանը պետք է դիմի շահագրգռված անձը կոնկրետ լրատվություն ստանալու խնդրանքով, իսկ հանրային հիմնարկությունը պարտավոր է ապահովել այս լրատվությանը ծանոթանալու հնարավորությունը անհապաղ կամ 10 օրից ոչ ուշ (այս դեպքում հանրային հիմնարկությունը պարտավոր է պահանջելուն պես դիմողին տեղեկացնել այդ մասին): Լրատվություն տալը մերժելու մասին որոշում ընդունելիս, հանրային հիմնարկությունը նույնպես պարտավոր է այդ մասին 3 օրվա ժամկետում տեղեկացնել դիմողին և բացատրել նրան իր իրավունքները և բողոքարկման կարգը:

Կարելի՞ է, թե ոչ՝ լրատվություն ստանալ բանավոր պահանջի հիման վրա:

Այն բանի համար, որպեսզի անձը ստանա իրեն ցանկալի հանրային լրատվությունը, նա համապատասխան հանրային հիմնարկությանը պետք է ներկայացնի գրավոր դիմում: Հանրային հիմնարկությունը իրավասու է լրատվությունը տալ բանավոր պահանջի հիման վրա, սակայն դա այս հիմնարկության իրավունքն է և ոչ՝ պարտականությունը: Միևնույն ժամանակ, հանրային հիմնարկությունը իրավունք չունի պահանջել անձից անվանել լրատվությունը պահանջելու դրդապատճառը կամ նպատակը:

Ի՞նչ ժամկետում պետք է տրվի լրատվությունը:

Լրատվությունը ժամանակին մատուցելը կարևոր է: Հաճախ շահագրգռված անձանց համար լրատվությունը արժեքավոր է միայն ժամանակի կարճատև հատվածում: Այդ պատճառով էլ նրանց համար կարևոր է այս լրատվությունը որքան հնարավոր է արագ ձեռքին ունենալ: Օրենսգրքի պահանջով, հանրային մարմինը լրատվությունը անհապաղ, պահանջելուն պես պետք է տա: Այս դիմումը պետք է ընկնի լրատվություն տալու համար պատասխանատու անձի մոտ: Բոլոր հանրային հիմնարկությունում պետք է լինի հատուկ լրատվություն տալու համար իրավասու անձ, ով պարտավոր է անհապաղ ձեռնամուխ լինել այս դիմումի քննարկմանը և որոշում ընդունել նույն օրը:

Եթե լրատվություն տալու համար պատասխանատու անձը այս հանրային հիմնարկությունում նաև այլ պարտականություններ ունի, նա նախ լրատվություն տալու մասին որոշում պետք է ընդունի և այնուհետև վերադառնա այլ լիազորությունների կատարմանը: Եթե միևնույն օրը վարչական մարմին միանգամից մի քանի դիմում մտնի, լրատվություն տալու համար պատասխանատու անձը այն քննարկում է դրանց մուտքագրվելու հերթականությամբ:

Մի շարք դեպքերում անհնար է անհապաղ լրատվություն տալը: Այդ պատճառով էլ, բացառության կարգով, Օրենսգիրքը նախատեսում է լրատվություն տալու տասնօրյա ժամկետ: Տասնօրյա ժամկետին պետք է դիմեն միայն այն դեպքում, եթե.

ա) Պահանջը լիարժեք բավարարելու համար անհրաժեշտ է լրատվության որոնում այլ բնակավայրերում գործող կառուցվածքային ենթաբաժիններից:
բ) Պահանջը լիարժեք բավարարելու համար անհրաժեշտ է լրատվության որոնում այլ հանրային հիմնարկություններից:
գ) Անհրաժեշտ է տարբեր տեսակի, միմյանց հետ չփոխկապակցված փաստաթղթերի որոնում և մշակում:
դ) Պահանջը բավարարելու համար Օրենսդրությունը պահանջում է, որպեսզի անցկացվեն խորհրդատվություններ այլ բնակավայրում գոյություն ունեցող կառուցվածքային ենթաբաժնի կամ այլ հանրային հիմնարկության հետ:

Տասնօրյա ժամկետի անհրաժեշտության դեպքում, այդ մասին անհապաղ պետք է տեղեկացվի լրատվություն պահանջողին: Ինչպես նաև նրան պետք է զգուշացնեն, թե ճշգրիտ քանի օր է հարկավոր լրատվություն տալու համար:

Կարելի՞ է, թե ոչ՝ բողոքարկել լրատվություն տալու մերժումը:

Եթե վարչական մարմինը գաղտնիացնում է որևէ փաստաթուղթ, դա չի նշանակում, որ այս որոշումը վերստուգել անհնար է: Շահագրգռված անձն իրավունք ունի բողոքարկել նշված որոշումը ինչպես դատարանում, այնպես էլ վերադաս վարչական մարմնում: Շահագրգռված անձը հայցով/բողոքով կարող է պահանջել մի կողմից՝ ընդունված որոշման լուծարում կամ փոփոխում և՝ նյութական կամ ոչնյութական վնասի փոխհատուցում: Լրատվության ազատության մասին գլխի հետ կապված հանրային հիմնարկությանը և մասնավոր անձի միջև ծագած վեճի ժամանակ ապացուցման բեռը ամբողջությամբ դրվում է հանրային հիմնարկության վրա:

Այս նորմի էությունը կայանում է նրանում, որ բոլոր վարչական մարմինները պետք է գործեն օրենսդրության ճիշտ պաշտպանությամբ և որոշում ընդունելիս պետք է հիմնավորեն,թե որ օրենսդրական կամ օրենքին ենթակա ակտի հիման վրա ընդունվեց որոշումը:

Կարելի՞ է, թե ոչ հանրային հիմնարկությունների նիստերին ներկա գտնվել:

Հանրային հիմնարկությունների նիստերը բաց են, քանզի կարևոր լրատվություն ներկայացնելը կատարվում է ոչ միայն պաշտոնական փաստաթղթերի տեսքով, այլև հանրային լիազորությունները իրականացնելու գործընթացում: Հասարակությունն ունի իրավունք գիտենալու՝ ինչ դիրքորոշում արտահայտեց գործընկերային հանրային

հիմնարկության անդամը նիստի ժամանակ, ինչպիսի հարցեր քննարկվեցին նիստի ժամանակ, կատարվե՞ց, թե ոչ հարցի ամեն կողմից քննարկում և ինչպես հասավ գործընկերային հանրային հիմնարկությունը վերջնական որոշման: Առանց այս լրատվության գործընկերային հանրային հիմնարկության անդամի և ամբողջությամբ հիմնարկության աշխատանքը անհնար է գնահատել:

Գործընկերային հանրային հիմնարկություն է համարվում այնպիսի հիմնարկությունը, որտեղ որոշում ընդունելը կատարվում է գործընկերային երկու կամ ավելի անձի կողմից քվեարկության հիման վրա կամ օրենսդրությամբ սահմանված այլ կարգով: Դրա հետ միասին անպայման չէ, որ նիստը պաշտոնական տեսք ունենա: Նիստը բաց է, թեկուզև գործընկերային հանրային հիմնարկության անդամները հավաքվում են ոչ միայն որոշում ընդունելու, այլև պատրաստելու նպատակով:

Այն բանի համար, որ հասարակությունը կարողանա իրեն հետաքրքիր նիստին ներկա գտնվել, նիստը վարելու և քննարկվելիք հարցերի մասին նրան նախապես պետք է տեղեկացնեն: Ինչը նշանակում է, որ ամեն մի հանրային հիմնարկության, մինչև նիստը մեկ շաբաթ առաջ, պետք է հայտարարվի նիստը անցկացնելու տեղի, ժամանակի և օրակարգի մասին, իսկ եթե նախատեսված է նիստում քննարկել գաղտնի հարցեր, ինչպես նաև նիստը փակելու վերաբերյալ որոշման մասին:

Հնարավոր է առաջանա անհապաղ նիստ անցկացնելու անհրաժեշտություն, այդ ժամանակ հնարավոր չէ մեկշաբաթյա ժամկետը պահպանել: Այդ պատճառով անհետաձգելի անհրաժեշտության դեպքում, Օրենսգիրքը նախատեսում է նիստ անցկացնել առանց նախապես հայտարարված ժամկետի պաշտպանության: Հենց որ կառաջանա նիստը սահմանված ժամկետից շուտ անցկացնելու անհրաժեշտություն և ընդունվի համապատասխան որոշում, հանրային հիմնարկությունը պարտավոր է, անհապաղ հայտարարել անհետաձգելի նիստ անցկացնելու տեղի, ժամանակի և օրակարգի մասին:

Չի թույլատրվում նիստին մասնակցելու համար արտակարգ հրավիրատոմս պահանջել: Նիստին ներկա գտնվել ցանկացողներին սահմանափակում կարելի է սահմանել միայն այն դեպքում, երբ ֆիզիկապես բոլոր ցանկացողներին նիստի դահլիճում տեղավորել անհնար է: Նման դեպքում կարելի սահմանել նիստին ներկա գտնվելու հատուկ կարգ: Այնպիսի հանրային հիմնարկությունները, որոնց նիստերի նկատմամբ հասարակության հետաքրքրությունը միշտ բարձր է, հասարակության համար նիստերի մատչելիության լայն հնարավորություններ պետք է ստեղծեն:

Օրենսգիրքը նախատեսում է նիստը փակելու հնարավորություն, եթե դա պետական, կոմերցիոն կամ անձնական գաղտնիքին պատկանող լրատվությունը հայտածելուց խուսափելու համար է անհրաժեշտ: Եթե նիստի օրակարգում մտցված է մի քանի հարց, որոնցից միայն մի մասն է պարունակում գաղտնի լրատվություն, նման դեպքում պետք է փակվի ոչ թե ամբողջությամբ նիստը, այլ միայն նիստի այն մասը, որի ժամանակ կքննարկվի գաղտնի լրատվությունը:

Վարժություններ

1 Ի՞նչ է նշանակում նշանակալից:

Երբևէ մտածե՞լ ես, արդյոք, թե ինչ է նշանակալից քեզ, որպես քաղաքացուդ համար: Կարելի՞ է մտածել նաև այն մասին, թե ինչ կարելի է անել, որպեսզի որպես քաղաքացի մասնակցություն ունենաս հասարակական կյանքին: Հաճախ ընտրությունները և ընտրության իրավունքը ասոցացվում են ճիշտ քաղաքացիական մասնակցության հետ: Ընտրությունները և ձայն տալու իրավունքը ժողովրդավարության նշանակալից բաղկացուցիչն է: Ընտրությունների արդյունքները կարող են էական ազդեցություն գործել քո կյանքի տարբեր կողմերի վրա:

Չնայած այն բանին, որ շատերը չեն հասել մինչև ընտրական տարիք, բազում երիտասարդներ ժողովրդավարական գործընթացին մասնակցում են տարբեր կերպ: Նրանք գործում են այն բանի համաձայն, թե ինչն է նրանց համար նշանակալից:

Ի՞նչ է նշանակալից քեզ քամար:

Կատարիր այն գաղափարների նույնականացում, որոնք համարում ես նշանակալից և կապված են ժողովրդի, տեղերի, հարցերի կամ երևույթների հետ:

Քո կարծիքով, ի՞նչը փոփոխությունների կարիք ունի: Դուրս գրիր նոր գաղափարներ:

Ինչ ես կարծում,ի՞նչ կարող ես դու անձամբ անել այս փոփոխությունները իրականացնելու համար:

Որոշման ընդունում, որը կապված է գործողության հետ, ներառնում է հետազոտության գործընթացը: Երբ պլանավորում ես, թե ինչպես պետք է գործես նշանակալից փոփոխությունների համար քո տանը, դպրոցում կամ համայնքում, դիմում ես հետազոտության մոդելին: Ի՞նչ է ներառնում մոդելի յուրաքանչյուր աստիճանը:



2 Պատասխանատվություն

Ի՞նչ միտք է հղանում գլխում, երբ լսում եք պատասխանատվություն բառը: Ռուտինային աշխատա՞նք: Դպրոցական / համալսարանային առաջադրանքնե՞ր: Կապու՞մ եք, թե ոչ պատասխանատվությունը քաղաքացիության հետ: Ժամանակի ընթացքում քաղաքացիների պատասխանատվության մասը փոփոխվեց: Թերևս հիմնարար պատասխանատվությունները հաճախ կապված են արժեքների հետ, որոնք չեն փոփոխվել, իսկ այս արժեքների հետ կապված գործողությունները փոփոխություն կրեցին:

Ի՞նչն է քո, որպես քաղաքացու պատասխանատվությունը:

Որքանո՞վ տարբեր կլիներ քո կյանքը, եթե ծնված լինեիր 1800 թվականին:

Ստորև թվարկված են Վրաստանում 2015 թվականին գոյություն ունեցող նախարարությունները: Ի՞նչ ես կարծում, ինչի համար է պատասխանատու դրանցից ամեն մեկը: Աղյուսակում գրանցեք յուրաքանչյուր նախարարության պատասխանատվության ոլորտը, ինչպես նաև կոնկրետ միջոցառումները, որոնց դիմում են այս հաստատությունները:

- Վրաստանի պաշտպանության նախարարություն
- Վրաստանի ներքին գործերի նախարարություն
- Վրաստանի արտաքին գործերի նախարարություն
- Վրաստանի տարածաշրջանային զարգացման և ենթակառույցի նախարարություն
- Վրաստանի բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարություն
- Վրաստանի աշխատանքի, առողջության և սոցիալական պահպանության նախարարություն
- Վրաստանի մշակույթի և հուշարձանների պահպանության նախարարություն
- Վրաստանի սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
- Վրաստանի ֆինանսների նախարարություն
- Վրաստանի էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարություն
- Վրաստանի էներգետիկայի նախարարություն
- Վրաստանի կրթության և գիտության նախարարություն

- Վրաստանի պատժա-կատարողական, պրոբացիայի և իրավաբանական հարցերով օգնության նախարարություն
- Վրաստանի գյուղատնտեսության նախարարություն
- Վրաստանի պետական նախարարի վարչություն եվրատլանտյան կառույցներին ինտեգրման հարցերով
- Վրաստանի պետական նախարարի վարչություն հաշտության և քաղաքացիական իրավահավասարության հարցերով
- Վրաստանի պետական նախարարի վարչություն Սփյուռքի հարցերով

Լրացրու աղյուսակը և պատասխանիր հետյալ հարցերին.

1. Ի՞նչն է հանդիսանում նշված նախարարության կամ դեպարտամենտի հիմնական գործառույթը:
2. Ի՞նչն է հանդիսանում նշված նախարարության 2-3 հիմնական, ամենակարևոր պատասխանատվությունը:
3. Ի՞նչ սերվիս, ծրագիր է առաջարկում նշված նախարարությունը քաղաքացիներին (կոնկրետ օրինակներ):
4. Ի՞նչ առնչություն ունի նշված նախարարությունը/դեպարտամենտը քո ամենօրյա կյանքի հետ:

Նախարարություն	Նպատակ և պատասխանատվություններ Սերվիս, դյուրացում, ծրագրեր...	Տեղեկատվության աղբյուր

3 Ընտրությունների փորձ

Հիշու՞մ եք, թե ոչ դեպք, երբ որևէ մեկը ներկայացնում էր ձեր շահերը: Կամ դու՞ք էիք ներկայացնում ուրիշինը: Երբ թիմի լիդե՞ր ես կամ խոսում ես թիմի անունից, ներկայացնում ես թիմի այլ անդամներին: Ե՞րբ ձեր ընտանիքի անդամը մասնակցում է հասարակական հավաքին, նա կարող է ներկայացնել ձեր հետաքրքրությունները: Ե՞րբ ձեր դասարանցին կամ համակուրսեցին մասնակցում է դպրոցի կամ համալսարանական հանդիպմանը, նա կարող է ներկայացնել ձեր դասարանը կամ ֆակուլտետը: Իշխանության ներկայացուցչությունը հիմված է նման սկզբունքի վրա:

Ուսանողական համագործակցությունը կարող է ներկայացնել ուսանողների շահերը, երբ ընդունում է որոշումներ, որոնք վերաբերում են բոլոր ուսանողներին: Ուսանողական ինքնակառավարումը կարող է նաև ստանձնել պատասխանատվություն տարբեր նախագծերի և գործնական պլանների համար:

Ունի՞, արդյոք ձեր դպրոցը/համալսարանը ինքնակառավարում: Ինչպե՞ս եք դուք ներկայացված: Ի՞նչ հնարավորություններ գոյություն ունեն այնտեղ ուսանողների լիդերությունը բացահայտելու համար:

Եթե ունենայիք ուսանողական ինքնակառավարում, որոնք կլինեին դրա պատասխանատվությունները: Կատարեք թվարկություն և համադրեք մյուսների հետ:

4 Անհատական գործնական պլանի ձևավորում

Ինչպե՞ս ապահովենք, որպեսզի մեր ձայնը հաղորդենք որոշումներ ընդունող ինստիտուտներին:

Ամեն օր դուք ընդունում եք որոշումներ և դիմում եք գործողությունների, որոնք ազդեցություն են գործում նաև մյուսների վրա: Անգամ այն ժամանակ, երբ հրաժարվում եք մասնակցել գործընթացներին, դուք արտահայտում եք սեփական դիրքորոշումը և ազդեցություն եք գործում մյուսների վրա: Մտածեք, ինչ ճանապարհով եք ցանկանում մասնակցել գործընթացներին և ինչ ազդեցություն կգործի ձեր արարքը ձեր ընտանիքի, ընկերների, դպրոցի, համալսարանի և համայնքի վրա:

Լրացրեք գործնական պլանը և համոզվեք, որ ձեր ձայնը լսելի կլինի:

Ի՞նչ գործողություններ եմ ցանկանում իրականացնել	Ի՞նչը գիտենալու կարիք ունեմ	Հնարավոր խոչընդոտներ և հաղթահարելի ճանապարհներ	Ինչպե՞ս գնահատեմ հաջողությունը/արդյունքը

Առաջադրի հարցեր.

- Ի՞նչն է դարձնում նախագծի հետ կապված հարցը նշանակալից և առանձնահատուկ:
- Ու՞մ վրա ազդեցություն կգործի հարցի լուծումը և ինչո՞ւ:
- Ինչպիսի՞ն է հարցի ազդեցությունը տեղայնացված, ազգային կամ գլոբալ մասշտաբով:
- Ո՞վ է ընդգրկված այս հարցի կարգավորման գործում (անհատներ կամ խմբեր, ինչպիսիք են իշխանությունը, բիզնեսը, ոչկառավարական կազմակերպությունները և այլն):
- Ի՞նչ ռազմավարությունների դիմեցին մյուսները այս հարցը լուծելու համար:

Գործնական պլան

Մինչև նախագծի իրականացումը, մեկ անգամ կրկին վերանայեք նպատակները և կիրառեք աղյուսակ այն քայլերը դուրս գրելու համար, որոնց կդիմեք նախագծի իրականացման համար. Ի՞նչ ակտիվություններ եք պլանավորում նպատակի իրականացման համար և ի՞նչ ռեսուրսներ են հասանելի ձեզ:

Ակտիվություններ	Ռեսուրսներ	Ով և երբ

5 Հաղորդակցություն և իրականացում

Ձեր նախագծի հաջողության համար անչափ կարևոր է արդյունավետ հաղորդակցությունը:

Արդյունավետ հաղորդակցությունը ենթադրում է.

- Հաղորդակցություն ուրիշների հետ հարցեր առաջադրելու ճանապարհով, ինչը նպատակամղված է լրատվություն ստանալուն,
- Փորձագետներին դիմել օգնության նպատակով,
- Ուրիշների իրազեկում նախագծի մասին,
- Նախագծի աջակցության որոնում: